

Արթուր Ղամբարյան

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտազործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-շուտասկան համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբան

ԵՆԹԱՏՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ¹

Համառոտագիր

Հոդվածում քննարկվում է հայ իրավաբանների միջև սուր բանավեճերի տեղիք տված հարցերից մեկը՝ ՀՀ-ում ո՞ր պետական մարմիններն են իրավասու ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինները, որոնց օրենսդիրն է լիազորել ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, թե՛ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնց Սահմանադիրն է լիազորել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության տեքստը նախապատրաստած առանձին սահմանադրագետներ post factum դիրքորոշում են հայտնում այն մասին, որ ՀՀ-ում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել միայն այն մարմինները, որոնք դրանով լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ: Հոդվածում քննադատվում է այս մոտեցումը, ինչպես նաև հիմնավորվում է, որ այդ սահմանադրագետների՝ սույն հարցի վերաբերյալ 2016 թ. դոկտրինալ աշխատանքներում արտահայտած դիրքորոշումը չի կարող համարվել Սահմանադրի ենթադրյալ կամքի բացահայտման աղբյուր (իրավունքի մեկնաբանման սուբյեկտիվ համակարգ):

Հոդվածում պատմաիրավական և իրավահամեմատական մեթոդների հիման վրա ներկայացվում է սույն հարցի վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունը:

Հեղինակը եզրակացնում է, որ ՀՀ-ում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել միայն այն մարմինները, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և միաժամանակ օրենքով լիազորված են ընդունել նման ակտ:

¹ Հոդվածը ներկայացվել է 05.04.2023թ., գրախոսվել է 09.06.2023թ.:

Հիմնաբառեր- ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմին, նորմատիվ իրավական ակտ, ենթաօրենսդրական ակտ, լիազորող նորմ, պատվիրակված օրենսդրություն, ռեզլամենտային ակտեր:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է.

«Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին»:

Այս նորմի մեկնաբանման վերաբերյալ հայ իրավաբանների շրջանում ծագել է բանավեճ. արդյո՞ք օրենսդիրը կարող է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին լիազորել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (այսուհետ՝ ենթաօրենսդրական ակտեր), թե՞ նման հնարավորություն ունի միայն Սահմանադիրը, այսինքն՝ ենթաօրենսդրական ակտեր կարող են ընդունել Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնք լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ, թե՞ նրանց համար նաև օրենքով կարելի է նման լիազորություն սահմանել:

1.2. Հայ իրավաբանների բանավեճի ընդհանուր նկարագիրը

1.2.2. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը: Իրավաբանների մի մասը (Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Պողոսյան) կարծում է, որ ենթաօրենսդրական ակտ կարող են ընդունել միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինները, այլ կերպ ասած՝ Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնց Սահմանադիրն է վերապահել ենթաօրենսդրական ակտ ընդունելու իրավասություն² (այս մեկնաբանությունը պայմանական կանվանենք «գերմանական մոդելի» մեկնաբանություն): ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի

² Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, «Տիգրան Մեծ» հրատ., ISBN 978-99941-0-772-8, Երևան, 2016, էջեր 29-30: Հովհաննիսյան Գ., «Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն», «Օմեգա պրինտ» ՍՊԸ, ISBN 978-9939-1-1108-7, Երևան, 2020, էջ 115: Պողոսյան Ա., Դիտարկումներ Ա. Ղամբարյանի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և սահմանադրական մարմինները» աշխատանքի վերաբերյալ // <https://www.academia.edu/s/6d6ba6a288?fbclid=IwAR1Ov42cJcxibDVoG-h4Mk31BTZapZLpvSgPJ-eV-UjVUyhvAmYC9KkL9a0> (մուտք 20.03.2023)

«գերմանական մոդելի» մեկնաբանության համաձայն՝ ՀՀ Սահմանադրությամբ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված են միայն Կառավարությունը (ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդված, 3-րդ մաս), կառավարության անդամները (ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդված, 4-րդ մաս), ինքնավար մարմինները (ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդված, 3-րդ մաս), համայնքի ավագանին (ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդված, 3-րդ մաս), Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ՀՀ Սահմանադրության 194-րդ հոդված, 2-րդ մաս), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդված, 5-րդ մաս), Կենտրոնական բանկը (ՀՀ Սահմանադրության 200-րդ հոդված, 5-րդ մաս) և Բարձրագույն դատական խորհուրդը (ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդված, 3-րդ մաս): Այս մոտեցմամբ, օրինակ, օրենսդիրը չի կարող սահմանել որոշակի հարցեր (դեպքեր), որոնց վերաբերյալ ՀՀ նախագահը կամ մարզպետները, որոնք ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնատար անձինք են, իրավասու կլինեն ընդունելու ենթաօրենսդրական ակտեր, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ այդ անձանց ենթաօրենսդրական ակտեր ընդունելու ընդհանուր լիազորություն վերապահված չէ:

Այս մոտեցումը հայկական իրականության մեջ նորույթ չէ. սահմանադրագետ Վ. Պողոսյանը և այլ մասնագետներ, որոնք 2015 թ. սահմանադրական բարեփոխումների ակտիվ դերակատարներից էին, դեռևս 2005 թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակահատվածում հանրությանը ներկայացրել էին Սահմանադրության փոփոխությունների հեղինակային նախագիծ, որի 7-րդ հոդվածի 5-րդ մասում ուղիղ (էքսպլիցիտ) նշել էին, որ նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինները³: 2005 թ. սահմանադրական փոփոխությունների հեղինակային նախագծում նրանց հաջողվել էր բավարար հստակությամբ ձևակերպել այն միտքը, որ ՀՀ-ում նորմատիվ իրավական ակտ կարող են ընդունել բացառապես Սահմանադրությամբ լիազորված մարմինները, մինչդեռ 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության (այսուհետ՝ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրություն) տեքստում նրանց մոտեցումը էքսպլիցիտ ձևակերպված չէ (այս մասին հաջորդիվ):

1.2.3. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստային-նպատակային մեկնաբանությունը: Իրավաբանների մյուս մասը (Գ. Դանիելյան, Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Թ. Շաքարյան, Ռ. Խանդանյան) կարծում է, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ ենթաօրենսդրական ակտ կարող են ընդունել Սահմանադրությամբ նախատեսված

³ Պողոսյան Վ., Թովմասյան Հ., Գրիգորյան Վ., «Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նախագիծ», «Ժողովրդավարություն» հաս. կազմակերպություն, Երևան, 2005, էջ 9:

այն մարմինները, որոնց նման լիազորություն վերապահվել է ոչ միայն Սահմանադրությամբ, այլ նաև օրենքով⁴: Այսպես, պրոֆեսոր Գ. Դանիելյանը նշում է.

«ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված չէ որևէ սահմանափակում, ավելին՝ հատակ նշվում է, որ խտաբը ոչ միայն Սահմանադրության, այլև օրենքների հիման վրա գործելու մասին է, ուստի անհասկանալի է, թե ինչ նկատառումով օրենքով սահմանադրական մարմիններին (Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին՝ հեղ.) չի կարող վերապահվել նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն, մասնավաճառ, որ դա երաշխիք է այդ մարմինների կողմից իրենց սահմանադրական լիազորություններն անհասկանալի կերպով տեսանկյունից»⁵:

1.2.4. Ուսումնասիրության առարկան: 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի էությունը պարզելու և «գերմանական մոդելի» մեկնաբանության խոցելի կողմերը հասկանալու համար նախ պետք է քննարկել ենթաօրենսդրական ակտերի հարաբերակցությունը պատվիրակված (դելեգացված) օրենսդրության և ռեզլամենտային ակտերի հետ, որից հետո անդրադարձ կկատարվի 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությանը: Բանն այն է, որ ենթաօրենսդրական, պատվիրակված և ռեզլամենտային ակտերի տարբերակման մասին տեսական պատկերացումների բացակայության հետևանքով իրավաստեղծ մարմինները երբեմն թույլ են տալիս համակարգային սխալներ: Օրինակ՝ 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածում սահմանվեցին հարցեր, որոնք կարող էին կարգավորվել բացառապես օրենքով, ինչը, ըստ էության, նման էր ֆրանսիական սահմանադրական իրավունքում առկա ռեզլամենտային ակտերի ինստիտուտին (այդ ցանկից դուրս գործադիր իշխանությունը պետք է հնարավորություն ստանար իրականացնել առաջնային՝ առանց «օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի» պայմանի կարգավորում): Մյուս կողմից 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությունում ավելացվեց դրույթ այն մասին, որ նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են օրենքի հիման վրա և ի կատարումն այդ օրենքների (2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված): Փաստորեն, 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությունը նախատեսում էր և՛ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի մասին ընդհանուր կարգավորում, և՛ ռեզլամենտային կարգավորման տրամաբանությամբ համապատասխանող նորմեր (այս մասին հաջորդիվ):

⁴ Դանիելյան Գ., Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա (ուսումնական ձեռնարկ), «Տիգրան Մեծ» հրատ., ISBN 978-99941-0-788-9, Երևան, 2021, էջեր 33-34: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Պետության և իրավունքի տեսություն. 3-րդ հրատ., Երևան, 2018, էջեր 452-453:

⁵ Դանիելյան Գ., Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա (ուսումնական ձեռնարկ), «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2021, էջ 33-34:

2. Ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը

2.1. Ընդհանուր դրույթներ

Հարցի համակողմանի քննարկման նպատակով պետք է տեսական հարթությունում համառոտ ներկայացնել ենթաօրենսդրական ակտերի էությունը, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերի, ռեգլամենտային ակտերի և պատվիրակված օրենսդրության հարաբերակցությունը:

2.2. Ենթաօրենսդրական ակտերը

Նախ նշենք, որ սկզբունքորեն սխալ է գործադիր իշխանության մարմինների ընդունած ցանկացած նորմատիվ իրավական ակտ ինքնաբերաբար անվանել ենթաօրենսդրական ակտ զուտ այն հիմքով, որ դա չպետք է հակասի օրենքին: Իրավական ակտը համարվում է ենթաօրենսդրական ոչ միայն այն պատճառով, որ այն չպետք է հակասի օրենքին⁶, այլ նաև այն պատճառով, որ այն պետք է ընդունվի օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի⁷:

Եթե ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են օրենքին համապատասխան, օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի (դասական իմաստով՝ ենթաօրենսդրական ակտ), ապա դա նշանակում է, որ դրանք պարունակում են երկրորդային նորմեր (իրականացնում է երկրորդային կարգավորում): Երկրորդային նորմերն այն կանոններն են, որոնք լրացնում և զարգացնում են օրենքում նշված առաջնային նորմերը⁸:

Որոշ իրավական համակարգերում գործադիր իշխանության մարմիններին թույլատրվում է իրականացնել օրենքի կարգավորման ոլորտից դուրս գտնվող հարաբերությունների առաջնային իրավական կարգավորում: Դա հնարավոր է այն դեպքում, երբ հարաբերության կարգավորման իրավասությունը Սահմանադրությամբ ուղղակիորեն վերապահված չէ օրենսդիր մարմնին⁹, իսկ սահմանադրական համակարգերը թույլատրում են գործադիր իշխանության մարմիններին իրականացնել այդ հարաբերության առաջնային կարգավորում, այսինքն՝ առանց «օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի» պայմանի: Նման ակտերը դասական իմաստով ենթաօրենսդրական չեն, քանի որ դրանք չեն ընդունվել օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի: Այդ ակտերը կոչվում են ռեգլամենտային ակտեր:

⁶ Օրինակ՝ Ս.Լ. Զիվը նշում է, որ ենթաօրենսդրականության հասկացության էությունը այն է, որ նորմատիվ ակտը պետք է համապատասխանի օրենքին: Տե՛ս Зивс С. Л. Источники права. М.: 1981. с. 111:

⁷ Отв. ред. Ю.А. Тихомиров., Конституция, закон, подзаконный ак», М., 1994. С. 52. Злобин А. В., «Юридическая природа подзаконных нормативных актов в Российской Федерации» // Вестник СГЮА., № 5 (88), 2012, с. 36.

⁸ Волкова С. Н. Регламентарные акты и их место в системе нормативных правовых актов, Сибирский юридический вестник, № 4., 2013. С. 11.

⁹ Սույն աշխատանքում օրենքի բացի պայմաններում գործադիր իշխանության մարմինների առաջնային կարգավորման հարցերը չեն քննարկվում:

2.3. Ռեզլամենտային ակտերը

Ընդհանուր մոտեցման համաձայն՝ ռեզլամենտային ակտերը գործադիր իշխանության մարմինների՝ հասարակական հարաբերությունների առաջնային կարգավորման արդյունքում ընդունած փաստաթղթերն են: «Այդ ակտերի իրավաբանական ուժը օրենքի ուժից ցածր է, սակայն դրանք ենթաօրենսդրական ակտեր չեն, քանի որ կարող են ընդունվել այնպիսի հարցերի առնչությամբ, որոնք օրենքով կարգավորված չեն»¹⁰: Ռեզլամենտային ակտերը երբեմն անվանվում են գործադիր իշխանության ինքնավար ակտեր¹¹:

Ռեզլամենտային ակտերը դասական իմաստով ենթաօրենսդրական ակտեր չեն, քանի որ այդ ակտերով կարգավորվող հարաբերությունները դուրս են օրենսդիր մարմնի կարգավորման ոլորտից, հետևապես դրանք չեն ընդունվում օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի:

Թեև ռեզլամենտային ակտերով կարգավորվում են այն հարաբերությունները, որոնք չեն կազմում օրենսդիր մարմնի բացառիկ կարգավորման առարկան, այնուամենայնիվ գործադիր իշխանության մարմինների ակտերով հարաբերությունների առաջնային կարգավորումն անմիջապես շոշափում է իշխանության բաժանման սկզբունքը, քանի որ գործադիր իշխանությանը հնարավորություն է տրվում առանց օրենսդիր մարմնի միջամտության (առանց «օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի» պայմանի) փաստացի ընդունել բովանդակային առումով «օրենքներ»: Այնուամենայնիվ, ռեզլամենտային ակտերի ինստիտուտը չի հակասում իշխանության բաժանման սկզբունքին, քանի որ այդ ակտերով չեն կարող կարգավորվել հասարակական կյանքի էական հարցերը: Բացի այդ, դրանց իրավաչափության նկատմամբ կարող է իրականացվել դատական վերահսկողություն: Իշխանության բաժանման սկզբունքի տեսանկյունից առավել խոցելի է պատվիրակված օրենսդրությունը:

2.4. Պատվիրակված օրենսդրությունը

«Պատվիրակված օրենսդրություն» ասելով՝ սովորաբար հասկացվում են խորհրդարանի տված հատուկ լիազորության (ուղիղ պատվիրակում) հիման վրա պետության գլխի կամ գործադիր իշխանության մարմնի ընդունած՝ օրենքի ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերը¹²:

¹⁰ Отв. ред. проф. Б.А. Страшун, «Конституционное (государственное право) зарубежных стран», в 4 т., тома 1–2, часть общая: учебник / 3-е изд., обновл. и дораб. М.: 2000. С.155.

¹¹ Романьков А.И., Червонюк В.И., «Делегированное законодательство и регламентарная власть: проблема утверждения конституционного партнерства во взаимоотношения законодательной и исполнительной ветвей власти», Сборник научных трудов кафедры конституционного и муниципального права: сборник статей, М.: Моск. ун-т МВД России, 2012. С. 65.

¹² Арефина С. И., «Проблемы делегированного законодательства в зарубежных странах (обзор)», Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература. Сер. 4, Государство и право: Реферативный журнал №3, 2002, С. 50.

Պատվիրակված օրենսդրության հասկացությունը ճշգրտելու նպատակով պետք է նշել մի քանի նկատառում:

Նախ՝ «պատվիրակված օրենսդրություն» հասկացության ծավալը կախված է իրավաստեղծ լիազորությունների պատվիրակման եղանակներից: Երբեմն պատվիրակման եղանակներն այնքան են լայնացվում¹³, որ դրա հետևանքով «պատվիրակված օրենսդրություն» հասկացությունում ընդգրկվում են նաև դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերը: Օրինակ՝ իրավաստեղծ լիազորության պատվիրակման եղանակ են համարում անուղղակի պատվիրակումը, երբ օրենսդիրն ընդունում է օրենքներ, սակայն այդ օրենքով առանձին հարցերի կարգավորումը (մանրամասների սահմանումը) թողնում է գործադիր իշխանության մարմինների հայեցողությանը: Եթե այս իրավիճակը նույնպես որակենք որպես պատվիրակում (նույնիսկ եթե այն անվանենք անուղղակի պատվիրակում), ապա պատվիրակված օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի տարբերակման սահմանագիծը պարզապես կվերանա:

Եթե օրենսդիրն ընդունում է օրենք, իսկ գործադիր իշխանության մարմիններն այդ օրենքի ընդհանուր կարգավորումները կոնկրետացնելու կամ օրենքի նյութաիրավական նորմերի իրականացման կառուցակարգեր սահմանելու նպատակով ընդունում են նորմատիվ իրավական ակտեր, ապա այս դեպքում խոսքը ոչ թե պատվիրակված օրենսդրության, այլ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի մասին է. չէ՞ որ գործադիր իշխանության այդ ակտերն ընդունվում են այդ օրենքի հիման վրա և ի կատարումն այդ օրենքի:

Երկրորդ՝ պատվիրակված օրենսդրություն կարելի է համարել միայն այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակման հիման վրա, այսինքն՝ օրենսդիր մարմինը Սահմանադրությամբ նախատեսված կարգավորման դեպքում ընդունում է հատուկ ակտ, որտեղ նշվում են թե կոնկրետ ո՞ր մարմինը ի՞նչ ժամկետում և ի՞նչ հարցերի վերաբերյալ է իրականացնելու պատվիրակված օրինաստեղծ լիազորությունները:

Օրինաստեղծ լիազորությունների պատվիրակումը չի կարող լինել ընդհանուր (վերացական) կամ առանց պայմանների: Ուղղակի պատվիրակման դեպքում օրենսդիրը իր օրինաստեղծ լիազորությունների մի մասը փոխանցում է գործադիր իշխանության մարմինն որոշակի ժամկետով կամ պայմաններով, օրինակ՝ նշում է պատվիրակված լիազորությունների նպատակը և սահմանները, հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ գործադիր իշխանության մարմինը կարող է ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, սկզբունքները և չափանիշները, որոնցով պետք է ղեկավարվի պատվիրակված լիազորություններն իրականացնելիս¹⁴:

¹³ Троицкий В.С., «Делегированное законотворчество: теория и практика: теория и практика», автореф. дисс. ... канд. юрид. наук. М.: 2005. С.10-11.

¹⁴ Троицкий В.С., «Делегированное законотворчество: теория и практика: теория и практика: автореф. дис. ... канд. юрид. наук». М.: 2005. С. 13.

Երրորդ՝ օրինաստեղծ լիազորությունների պատվիրակման դեպքում օրենսդիրը գործադիր իշխանության մարմնին պատվիրակում է կարգավորել այն հարաբերությունները, որոնք գտնվում են իր իրավասության տիրույթում: Այլ կերպ ասած՝ գործադիր իշխանության մարմինը օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակման դեպքում հնարավորություն է ստանում կարգավորել այն հարաբերությունները, որոնք սովորական պայմաններում պետք է կարգավորեր օրենսդիր մարմինը: Այդ պատճառով էլ պատվիրակված օրենսդրությունը հաճախ անվանում են օրենքի ուժ ունեցող որոշումներ:

Եթե պատվիրակված օրենսդրությունը համեմատենք օրենքների, ռեգլամենտային ակտերի և ենթաօրենսդրական ակտերի հետ, ապա կատարյալ հետևյալ պատկերը. պատվիրակված օրենսդրությունը նման է օրենքին, քանի որ կարգավորում է այնպիսի հարաբերությունները, որոնք սովորական պայմաններում պետք է կարգավորվեին օրենքով: Պատվիրակված օրենսդրությունը, ըստ էության, գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունված օրենքներն է (օրենքի ուժ ունեցող որոշումներ)¹⁵: Պատվիրակված օրենսդրությունը, ինչպես և օրենքները, պարունակում են առաջնային իրավական նորմեր¹⁶: Այնուամենայնիվ, պատվիրակված օրենսդրությունը օրենքներից տարբերվում է նրանով, որ այն ընդունում են գործադիր իշխանության մարմինները: Պատվիրակված օրենսդրությունը չպետք է հակասի պառլամենտի ընդունած օրենքներին:

Պատվիրակված օրենսդրությունն ընդունող սուբյեկտների (գործադիր իշխանություն իրականացնող մարմինների) և ընդունման ընթացակարգի տեսանկյունից նման է ենթաօրենսդրական ակտերին: Տարբերությունն այն է, որ պատվիրակված օրենսդրությունը պարունակում է առաջնային իրավական նորմեր, այսինքն՝ դրանք հիմնված չեն օրենքի վրա և չեն ընդունվել ի կատարումն օրենքի ընդհանուր կարգավորումների: Պատվիրակված օրենսդրության հիմքը օրենսդիր մարմնի օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակումն է:

Պատվիրակված օրենսդրությունը նման է նաև ռեգլամենտային ակտերին, քանի որ երկուսն էլ, ի տարբերություն դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի, պարունակում են առաջնային իրավական նորմեր: Նրանց տարբերությունը հետևյալում է. ռեգլամենտային ակտերը կարգավորում են այն հարցերը, որոնք օրենսդրի իրավասության մեջ չեն մտնում, մինչդեռ պատվիրակված օրենսդրությամբ կարգավորվում են այնպիսի հարաբերություններ, որոնք գտնվում են բացառապես օրենսդրի իրավասության տիրույթում:

Գործադիր իշխանության մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտերի ընդունումն այս կամ այն չափով սահմանափակում է իշխանության բա-

¹⁵ Amit Kumar Judicial review over Delegated Legislation // https://www.academia.edu/34367947/Judicial_review_over_Delegated_Legislation (մուտք 20.03.2023)

¹⁶ Троицкий В.С., «Делегированное законотворчество: теория и практика»: автореф. дис. ... канд. юрид. Наук. М.: 2005. С. 6.

ժամանակակից սկզբունքը, հատկապես՝ պատվիրակված օրենսդրությունը: Այս պատճառաբանությամբ 2005թ. սահմանադրական փոփոխություններով վերացվեց ՀՀ ազգային ժողովի պատվիրակման ակտի հիման վրա ՀՀ կառավարության կողմից օրենքի ուժ ունեցող որոշումներ ընդունելու ինստիտուտը (1995թ. ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածը), իսկ 2015թ. խմբ. Սահմանադրությամբ մի քանի ուղղություններով խստացվեցին ենթաօրենսդրական ակտեր ընդունելու պահանջները: Մինչդեռ իրավահամեմատական հետազոտությունները վկայում են հակառակ միտումի մասին. պատվիրակված օրենսդրությունը կամ պառլամենտի հանձնարարությամբ ընդունված և գործադիր իշխանության՝ օրենքի ուժ ունեցող ակտերը ժամանակակից պետություններում ունեն անի միտում: Դա պայմանավորված է իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների քանակական և որակական աճով¹⁷:

2.5. Իրավահամեմատական տեսանկյունը

2.5.1. Ռեզլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերի պրակտիկայի ընդլայնման միտումը: Հեղինակավոր սահմանադրագետները նշում են, որ ոչ վաղ անցյալում գործադիր իշխանության ակտերը, առնվազն դոկտրինալ հարթությունում, դիտվում էին որպես ենթաօրենսդրական ակտեր, այսինքն՝ օրենքի հիման վրա և ի կատարում օրենքի ընդունված ակտեր: Ներկայումս այս մոտեցումն ամբողջությամբ չի արտացոլում առկա իրողությունները: Քանի որ օրենքի կիրառման շրջանակը սահմանափակ է, դրանից դուրս կարգավորումը սկսում է իրականացվել հենց գործադիր իշխանության ակտերով: Մրանք, այսպես ասած, փոխարինում են օրենքին (...)¹⁸:

Մեկ այլ աշխատանքում կարդում ենք.

«Գործադիր իշխանության մարմիններն ունեն անկախ նորմաստեղծ լիազորություններ, որոնք դուրս են գալիս օրենքի կիրառման գործադիր և վարչական գործունեության սահմաններից: Պառլամենտի կողմից պատվիրակված լիազորությունների հիման վրա, ունենալով ինքնուրույն ռեզլամենտային (регламентарный) լիազորություններ, նախագահը, կառավարությունը և նախարարներն ընդունում են կյանքի կարևոր որոշումները կարգավորող բազմաթիվ նորմատիվ ակտեր: Հաճախ նման ակտերն ունեն ոչ պակաս, այլ ավելի մեծ նշանակություն, քան օրենքը»¹⁹:

Այսպիսով ի տարբերություն ՀՀ-ում գործադիր իշխանության մարմինների, նորմաստեղծ լիազորությունները յուրաքանչյուր սահմանադրական բարեփո-

¹⁷ Берлявский Л. Г., Данихно С. Н., Классификация источников конституционного права: вопросы теории и практики, Юрлитинформ, М., 2019. С. 325.

¹⁸ Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М. В. Баглая, д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина Конституционное право зарубежных стран: учебник, Норма, М., 2004. С. 24.

¹⁹ Чиркин В.Е., Конституционное право зарубежных стран, Юристъ, М., 1997. С. 266-267:

խումների ընթացքում քայլ առ քայլ սահմանափակելու հայկական սահմանադրական իրավունքի՝ համեմատական սահմանադրական իրավունքի դոկտրինը փաստում է, որ ենթաօրենսդրական ակտերի հիման վրա իրականացվող կարգավորումը իր տեղը զիջում է ռեզլամենտային ակտերին կամ պատվիրակված օրենսդրությանը:

2.5.2. Ռեզլամենտային ակտերը ռոմանական իրավական համակարգերում: Ռոմանական իրավական համակարգերին պատկանող երկրներում (Ֆրանսիա, Իտալիա, Պորտուգալիա, Լյուքսեմբուրգ, Իսպանիա, Մարոկկո և այլն) նորմատիվ իրավական ակտերի համակարգը բաղկացած է ոչ միայն օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից, այլ նաև ռեզլամենտային ակտերից: Ռեզլամենտային ակտերի ընդունման պրակտիկան նախատեսվել է Ֆրանսիայի 1958թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակ, երբ Սահմանադրությամբ սահմանվեց հարցերի որոշակի ցանկ, որոնց վերաբերյալ օրենսդրական ակտեր կարող է ընդունել օրենսդիր մարմինը: Մյուս հարցերը, որոնք վերապահված չեն օրենսդրին, կարգավորվում են գործադիր մարմինների ռեզլամենտային ակտերով: Ընդ որում, Ֆրանսիայում կառավարությունը իրավասու է ընդունել ինչպես ռեզլամենտային ակտեր, այնպես էլ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտեր, որոնք կոչված են կոնկրետացնելու օրենսդրական ակտերի ընդհանուր դրույթները: Մասնագետները իրավահամեմատական վերլուծության արդյունքում եզրակացնում են, որ ռոմանական իրավական համակարգերում ռեզլամենտային ակտերն ունեն լայն տարածում²⁰:

Ի տարբերություն Ֆրանսիայի՝ Գերմանիայի 1949 թ. Հիմնական օրենքը գործադիր իշխանության մարմինների համար ինքնավար կարգավորումներ սահմանելու հնարավորություն չի նախատեսում, դեկրետ-օրենքների ընդունման պրակտիկան արգելվում է: Գերմանիայում կառավարական և այլ ենթաօրենսդրական ակտերը կարող են ընդունվել միայն օրենքների կատարման շրջանակներում²¹: Գերմանական իրավունքի երկրներում, որպես կանոն, գործադիր իշխանության մարմինների ակտերի ինքնավարությունը բացակայում է²²:

Նկատի ունենալով, որ միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինների կողմից նորմատիվ որոշումներ ընդունելու վերաբերյալ (2015 թ. իսբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մաս) «գերմանական մոդելի» մեկնաբանության

²⁰ Волкова С. Н., «Сравнительный анализ системы нормативных актов в странах романо-германской правовой семьи и в странах «Общего права», Вестник Университета имени О. Е. Кутафина, №3 (19), 2016, С. 214-216.

²¹ Саидов А.Х., «Сравнительное правоведение (основные правовые системы современности): учебник», Под ред. В.А. Туманова, Юристъ, М., 2003. С. 172.

²² Волкова С. Н., «Сравнительный анализ системы нормативных актов в странах романо-германской правовой семьи и в странах «Общего права», Вестник Университета имени О. Е. Кутафина, №3 (19), 2016, С. 216.

հիմքում, ամենայն հավանականությամբ, ընկած են գերմանական սահմանադրական իրավունքի ավանդույթները և սահմանադրական մտածողությունը՝ ուստի նրանց մոտեցման խորքերը հասկանալու համար կարևոր է պարզել Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման էությունը:

2.5.3. Պատվիրակված ակտերը գերմանական իրավունքում

(ա) Միայն Հիմնական օրենքով լիազորված մարմինների կողմից որոշումներ ընդունելու կարգավորումը: Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է.

«Օրենքը կարող է լիազորել Դաշնային կառավարությանը, Դաշնային նախարարին կամ երկրամասերի կառավարություններին ընդունելու՝ իրավական որոշումներ: Ընդ որում, օրենքով պետք է սահմանվեն տրված լիազորությունների բովանդակությունը, նպատակը և ծավալը: Որոշման մեջ պետք է նշվի դրա իրավական հիմքը: Եթե օրենքը նախատեսում է լիազորությունների հետագա փոխանցում, սպա լիազորությունների փոխանցման համար պահանջվում է իրավական որոշում»²³:

Ինչպես նկատում ենք, Գերմանիայի Հիմնական օրենքով է սահմանված, թե օրենսդիրը գործադիր իշխանության ո՞ր մարմիններին կարող է փոխանցել իրավական որոշում կայացնելու լիազորությունը, այսինքն՝ օրենսդիրը Դաշնային կառավարությունից, Դաշնային նախարարներից կամ երկրամասերի կառավարություններից բացի, այլ մարմինների, եթե նույնիսկ դրանք սահմանադրական մարմիններ են, չի կարող տրամադրել իրավական որոշումներ ընդունելու լիազորություն (բացառությամբ ենթապատվիրակման դեպքի, որի մասին կխոսվի հաջորդիվ): Թեև առանձին մասնագետներ փաստում են, որ «Գերմանիայում կառավարական և այլ ենթաօրենսդրական ակտերը միայն օրենքների կատարման շրջանակներում ընդունելու կանոնից առկա են բացառություններ»²⁴, սակայն, ցավոք նրանք չեն նշում այն դեպքերը (բացառություններ), երբ գործադիր իշխանության մարմինները գործնականում ընդունում են ռեզլամենտային (օրենքներից ինքնավար) ակտեր: Բացի այդ, Ռ. Դավիդը նշում է, որ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը սանկցավորել է լայն տարածում ստացած այն օրենսդրությունը, որով կառավարման մարմիններն օժտվում են նորմաստեղծ լայն լիազորություններով²⁵:

Միայն Հիմնական օրենքով լիազորված մարմինների կողմից իրավական որոշումներ ընդունելու կարգավորումը վերլուծելիս պետք է նկատի ունենալ երկու հանգամանք:

²³ Сост. Дубровин В.Н., «Конституции зарубежных стран», Юрлитинформ, М., 2001. С. 151.
²⁴ Саидов А.Х., «Сравнительное правоведение (основные правовые системы современности): учебник», под ред. В.А. Туманова, Юрист, М., 2003. С. 172.
²⁵ Рене Давид, Камилла Жоффре-Спинози, «Основные правовые системы современности», пер. с фр., Международные отношения, М., 1999, С. 84.

Նախ՝ Գերմանիայի իրավական համակարգում «օրենք» (Gesetz) հասկացությունը, ի տարբերություն Հայաստանի²⁶, ընկալվում է ձևական և նյութական իմաստներով: Այս տեսանկյունից, օրենք են ոչ միայն պառլամենտի ընդունած նորմատիվ իրավական ակտերը (ձևական իմաստով օրենք), այլև գործադիր իշխանության մարմինների ընդունած (նրան պատվիրակված) ակտերը (նյութական իմաստով օրենք): Այն փաստը, որ Գերմանիայում իրավական որոշումները կարող են ընդունել միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինները, մի գուցե պայմանավորված է այն հանգամանքով, որ բոլոր այդ ակտերը գերմանական դոկտրինը համարում է օրենք: Պատահական չէ, որ տեսության մեջ նշվում է.

«Բոլոր այն ակտերը, որոնք անվանվում են «օրենք», պետք է բխեն սահմանադրորեն ճանաչված օրենսդիր մարմիններից կամ էլ ընդունվեն խիստ կանոնակարգված, այն դեպքերում, երբ խոսքը պատվիրակված օրենսդրության մասին է»²⁷:

Երկրորդ՝ Գերմանիայի Հիմնական օրենքով նախատեսված է նշված երեք գործադիր իշխանության մարմինների իրավաստեղծ լիազորությունների **ենթա(վերա) ապատվիրակման** (Sub-delegate²⁸) հնարավորություն, այսինքն՝ օրենքը կարող է նախատեսել Դաշնային կառավարությանը, Դաշնային նախարարին կամ երկրամասերի կառավարություններին պատվիրակված լիազորությունների հետագա փոխանցում այլ մարմիններին: Գերմանական սահմանա-

²⁶ Հետխորհրդային պետություններում, այդ թվում՝ ՀՀ-ում, «օրենք» հասկացությունն առավելապես ընկալվում է որպես պառլամենտի կամ ժողովրդի ընդունած նորմատիվ իրավական ակտ, իսկ գործադիր իշխանության մարմինների ակտերի համար գործածվում է «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» ձևակերպումը: Եթե որևէ իրավական ակտի տեքստում գործածվում է «օրենք» եզրույթը, սակայն նորմի բովանդակությունից ակնհայտ է, որ այն վերաբերում է ոչ միայն պառլամենտի ընդունած օրենքներին, այլև բոլոր նորմատիվ իրավական ակտերին (օրինակ՝ օրենքի առջև հավասարության սկզբունքն ամրագրող օրենքի տեքստերը), ապա նման դեպքերում «օրենք» եզրույթը պարզաբանվում է ոչ թե օրենքները նյութական և ձևական իմաստներով ընկալելու մասին գերմանական դոկտրինի օգնությամբ, այլ «օրենք» հասկացության տարածական մեկնաբանման միջոցով: Օրինակ՝ 2005թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի (օրենքի առջև հավասարությունը) մեկնաբանություններում նշվում է. «14.1-րդ հոդվածի առաջին պարբերությունում օգտագործված «օրենք» հասկացությունն անհրաժեշտ է հասկանալ ոչ միայն բուն իմաստով օրենքը, այլև համապարտադիր նշանակություն ունեցող ցանկացած իրավական ակտ, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությունը՝ որպես Հիմնական օրենք, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումները (ՀՀ նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, ՀՀ ազգային ժողովի որոշումները և այլն)»: Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», ընդ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, «Բրավունք», Եր., 2010, էջ 171:

²⁷ Foster N., German law and Legal System. Mayfiel”, 1993. P. 47. Цит. по Марченко М. Н., «Курс сравнительного правоведения», Городец, М., 2002. С. 540.

²⁸ Mahendra P. Singh German Administrative Law In Common Law Perspectiv”, University of Delhi, Delhi, India, 1985. P. 27.

դրական իրավունքի ավանդույթները կիսող հայ մասնագետները 2015 թ. սահմանադրական փոփոխությունները նախագծելիս չեն նախատեսել Սահմանադրությամբ լիազորված մարմինների (ըստ իրենց մեկնաբանության) իրավաստեղծ լիազորությունների պատվիրակման մասին կարգավորում: Նրանք մի կողմից իրավաստեղծ լիազորությունների ենթապատվիրակման մասին գերմանական իրավունքի դրույթը ռեցեպցիայի չենթարկեցին, մյուս կողմից 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը հետևողականորեն մեկնաբանում են գերմանական մտածողությամբ, որի արդյունքում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ օրինակ, ՀՀ կառավարությունը նույնիսկ սուր անհրաժեշտության (արտակարգ) իրավիճակներում չի կարող մարզպետներին վերապատվիրակել որոշ հարցերի վերաբերյալ ընդունելու (օպերատիվ կարգով և մարզային առանձնահատկությունները հաշվի առնելով) ենթաօրենսդրական ակտեր. չէ՞ որ ըստ այդ խմբի մասնագետների՝ մարզպետները Սահմանադրությամբ լիազորված չեն ընդունելու ենթաօրենսդրական ակտեր:

(բ) Ենթաօրենսդրական ակտ, թե՛ պատվիրակված օրենսդրություն: Քննարկվող հարցի տեսանկյունից կարևոր է պարզել թե, Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածում ամրագրված է պատվիրակված օրենսդրությամբ, թե դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի իմաստիտուտը:

Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում օրինաստեղծ լիազորությունների պատվիրակման մասին էքսպլիցիտ չի նշվում, սակայն կարելի է ենթադրել, որ այդ հոդվածում խոսքը ոչ թե դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի, այլ պատվիրակված օրենսդրության (օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակման) մասին է:

Նախ՝ բառօգտագործման տեսանկյունից Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի կապակցությամբ ռուսական և անգլիական գրականությունում հիմնականում օգտագործվում է «պատվիրակված իրավաստեղծ լիազորություններ» հասկացությունը²⁹: Այսպես՝ ռուս տեսաբանները նշում են, որ Հիմնական օրենքի 80-րդ հոդվածը թույլատրում է օրինաստեղծ լիազորությունների պատվիրակում: Այդ նպատակով օրենքը կարող է Դաշնային կառավարությանը, Դաշնային նախարարներին կամ երկրամասերի կառավարություններին լիազորել ընդունել իրավական որոշումներ (rechtsverordnungen)³⁰: Մեկ այլ տեսական աղբյուրում կարդում ենք.

«Գերմանիայում պատվիրակված օրենսդրության ակտերը նորմատիվ որոշումներ են (Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի ռուսական թարգմանությունում նշվում է «իրավական որոշում» ձևակերպումը.- հեղ.), որոնք

²⁹ Жалинский А., Перихт А. Введение в немецкое право», М., 2001, С. 55. Mahendra P. Singh, “German Administrative Law In Common Law Perspective”, University of Delhi Delhi. India, 1985, P. 27.

³⁰ Лафитский В., Миры права в теории и практике сравнительного правоведения, в 2-х томах. Том I, 2021, С. 294.

գերմանական իրավական դոկտրինը դիտարկում է օրենքներ՝ նյութական: Ընդհանուր բնույթի իրավական կարգադրագրեր պարունակող և օրենքի ուժ ունեցող այդ ակտերը Սահմանադրությամբ սահմանված գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունվում են Հիմնական օրենքում սահմանված պահանջներին համապատասխան՝ որոշակի հասարակական հարաբերությունների առաջնային կարգավորման նպատակով»³¹:

Երկրորդ՝ պատվիրակված օրենսդրության մասին է վկայում նաև այն կարգավորումը, ըստ որի՝ օրենքում պետք է սահմանված լինեն պատվիրակվող լիազորության բովանդակությունը, նպատակը և ծավալը: Օրինակ՝ գերմանացի մասնագետների կարծիքով՝ Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները պահպանելու նպատակով լիազորությունների պատվիրակման մասին օրենքում պետք է սահմանվեն համապատասխան կարգավորման ծրագրային, պետական-քաղաքական, իրավական-քաղաքական և հասարակական-քաղաքական նպատակները³²:

Ինչպես նշվեց, փոխանցվող լիազորություններին ներկայացվող բովանդակային և ժամկետային խիստ սահմանափակումները ներհատուկ են օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակմանը, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ օրենսդիրը գործադիր իշխանության մարմնի պատվիրակում է ընդունել որոշումներ այն հարցերի վերաբերյալ, որոնք գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասության ներքո, ուստի լիազորությունների պատվիրակումը պետք է ունենա հստակ սահմաններ և լինի կոնկրետ:

Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի կիրառման պրակտիկայում Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը մշակել է մի շարք իրավական թեստեր, որոնք թույլ են տալիս մի կողմից՝ սահմանափակել պետական իշխանությունների հայեցողության ազատությունը, իսկ մյուս կողմից՝ ճանաչել բուն լիազորությունների փոխանցման սահմանադրականությունը: Դրանք ներառում են այնպիսի թեստեր, ինչպիսիք են՝ կանխատեսելիության թեստը (որի շրջանակներում ստուգվում է, թե արդյոք պատվիրակման մասին օրենքի հիման վրա հնարավոր է բացահայտել գործադիր մարմնի լիազորությունների էությունը), պատվիրակման մասին օրենքի լրիվության թեստը (թե արդյոք օրենսդիրը կատարել է համապատասխան կարգավորման առարկան և նպատակները սահմանելու մասին սահմանադրական պահանջները), ծրագրային թեստը (որի շրջանակներում հետազոտվում է, թե արդյոք պատվիրակման մասին օրենքում պատշաճ հստակությամբ սահմանված է սպազա կարգավորման ծրագիրը)³³:

³¹ Жалинский А., Рерихт А., «Введение в немецкое право», М., 2001, С. 55

³² Lindseth P., “The Paradox of Parliamentary Supremacy: Delegation, Democracy and Dictatorship in Germany and France”, *Jale Law Journal*, 2004, Vol. 13, P. 1393–1394.

³³ Васильева Т. А., «Акты делегированного законодательства как источник публичного права зарубежных стран», *труды Института государства и права РАН*, №1, 2011, С.175.

Դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի դեպքում, որոնք ընդունվում են օրենքի հիման վրա և դրա իրականացման նպատակով, օրենսդրից չի պահանջվում նման հստակությամբ սահմանել այն հարցերի ցանկը և ծավալը, որոնք պետք է կարգավորվեն գործադիր իշխանության մարմնի ակտերով: Այս տեսանկյունից կարելի է ենթադրել, որ Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ նշվում է փոխանցվող լիազորությունների բովանդակության, նպատակի և ծավալի մասին, ամրագրված է օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակման ինստիտուտը:

Այս համատեքստում հարցեր է առաջացնում այն մոտեցումը, երբ որոշ իրավաբաններ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում առկա՝ ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորող նորմի որոշակիության պահանջը մեկնաբանում են Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում ուղղակիորեն նախատեսված, սակայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի տեքստում բացակայող՝ «լիազորությունների բովանդակություն, նպատակ և ծավալ» եզրութաբանությամբ: Այսպես.

«Ենթաօրենսդրական ակտերի ընդունում թույլատրող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչը մասնավորապես նշանակում է, որ դրանք պետք է սահմանեն կոնկրետ ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորության բովանդակությունը, նպատակը և ծավալը»³⁴:

Եթե 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում խոսվում է դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի մասին (որոնք պետք է ընդունվեն օրենքի հիման վրա և ի կատարումն այդ օրենքի), ապա ինչու պետք է լիազորող նորմի համար սահմանվի այնպիսի խիստ պահանջներ (լիազորությունների բովանդակություն, նպատակ և ծավալ), որոնք վերը նշված պատճառներով ներհատուկ են պատվիրակված օրենսդրությանը:

Երրորդ՝ Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում օրինաստեղծ լիազորությունների պատվիրակման նման խիստ սահմանափակումներ նախատեսելու հարցում իրենց ազդեցությունն են ունեցել այդ պետության պատմության մեջ օրենսդրի կողմից իր օրինաստեղծ լիազորությունները գործադիր իշխանության մարմնին ընդհանուր ձևով փոխանցելու դեպքերը, որի արդյունքում խախտվել է իշխանության բաժանման սկզբունքը: Օրինակ՝ 1933 թ. «Լիազորման օրենքով» (Ermächtigungsgesetz) Կառավարությունը լիազորություն ստացավ, առանց պառլամենտի որևէ մասնակցության, ցանկացած հարցով ընդունել օրենքներ: Այս օրենքի միջոցով Հիտլերն իր ձեռքերն ազատեց սահմանադրական և օրենսդրական սահմանափակումներից, իսկ պառլամենտը փաստացի

³⁴ Հովհաննիսյան Գ. Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, «Օմեգա պրինտ» ՄԳԸ, ISBN 978-9939-1-1108-7, Երևան, 2020, էջ 113:

դարձավ ավելորդ մարմին: Այս օրենքը դարձավ ֆաշիստական Գերմանիայի օրենսդրության «հիմքերի հիմքը»³⁵:

Պատահական չէ, որ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը հետագայում շեշտել է, որ պառլամենտը չի կարող խուսափել իր օրինաստեղծ պարտականություններից՝ իր օրենսդրական լիազորությունների մի մասը փոխանցելով գործադիր իշխանությանը, եթե նա չի դիտարկել և հստակ չի սահմանել այդ լիազորությունների ծավալը, իսկ գործադիր իշխանության մարմինները չեն կարող փոխարինել պառլամենտին այնպիսի անորոշ դրույթների հիման վրա, որոնք լիազորում են նրանց հրապարակել համապատասխան կարգավորումը: Իրավունքի գերակայության սկզբունքն արգելում է օրենսդիր մարմնին էական հարցերի կարգավորումը վերապահել գործադիր մարմիններին³⁶:

Կարևոր է նաև այն փաստը, որ Հիմնական օրենքի 84-րդ հոդվածը հնարավորություն է տալիս Դաշնային կառավարությանը Բունդեսռատի համաձայնությամբ ընդունել վարչական կարգադրագրեր (verwaltungsverfahren), որոնք վերաբերում են երկրամասերի կողմից դաշնային օրենքների կատարմանը: Նշված հեղինակը փաստում է, որ Դաշնային նախարարությունները և վարչական գերատեսչությունները, բացի որոշումներից, ընդունում են վարչական ինստրուկցիաներ, ցերկուլյարներ: Հեղինակը դրանք անվանում է վարչական նորմատիվ-իրավական ակտեր, սակայն չի բացահայտում, թե այդ ակտերն արդյոք պարունակո՞ւմ են իրավական նորմեր (տիպային վարքագծի կանոններ), որոնք ունեն արտաքին ներգործություն³⁷: Նկատենք, որ հայկական հանրային իրավունքում ակտերի նման տեսակներ պոզիտիվ իրավունքով նախատեսված չեն. դրանք պետք է ունենան անհատական, լոկալ կամ նորմատիվ իրավական ակտի ձև:

Վերը թվարկված հանգամանքները ներհատուկ են գերմանական իրավական համակարգին, ուստի այդ պետության իրավական որոշ ինստիտուտներ ՀՀ սահմանադրական համակարգ ռեցեպցիայի ենթարկելիս դրանք պետք է հաշվի առնել: Այդ հանգամանքները պետք է նկատի ունենալ նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը մեկնաբանելիս:

³⁵ Այս մասին տե՛ս Соколов А. Н. Правовое государство: от идеи до ее материализации, Калининград, 2002, С. 90-91.

³⁶ Currie D.P. The Constitution of the Federal Republic of Germany, Chicago, 1995, p. 126–131, цит. по Васильева Т. А. Акты делегированного законодательства как источник публичного права зарубежных стран, труды Института государства и права РАН, №1, 2011, С. 173-174.

³⁷ Лафитский В. Миры права в теории и практике сравнительного правоведения, в 2-х томах, том I., 2021, С. 294-295.

2.6. Ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը ՀՀ սահմանադրական իրավունքի պատմությունում

2.6.1. Ենթաօրենսդրական և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը ՀՀ Սահմանադրությամբ (1995թ. խմբ.): ՀՀ Սահմանադրությունում (1995 թ. խմբ.) «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը չէր գործածվում: Դրա փոխարեն նշվում էին «ՀՀ ազգային ժողովի որոշում», «ՀՀ կառավարության որոշում», «Հանրապետության նախագահի հրամանագրեր և կարգադրություններ» ձևակերպումները: Դոկտրինալ տեսանկյունից այս ակտերը համարվում էին ենթաօրենսդրական, սակայն այն իմաստով, որ դրանք չպետք է հակասեն պառլամենտի օրենքներին: Օրինակ՝ ՀՀ նախագահի հրամանագրերի և կարգադրությունների մասով ուղղակիորեն սահմանված էր, որ Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները չեն կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին (ՀՀ Սահմանադրությունում (1995 թ. խմբ.) 56-րդ հոդված): Այս պատմաշրջանում ձևավորված չէր այն մոտեցումը, որ գործադիր իշխանության ակտերը ոչ միայն չպետք է հակասեն օրենքին, այլ պետք է հիմնված լինեն օրենքի վրա: Սա գործնականում նշանակում էր, որ ՀՀ նախագահը կամ ՀՀ կառավարությունը կարող էին իրականացնել առաջնային կարգավորում, այսինքն՝ ընդունելի, այսպես կոչված, ռեգլամենտային ակտեր, որոնք թեև չեն հակասում օրենքին, սակայն հիմնված չէին օրենքի վրա: Ավելին, այդ պատմաշրջանում ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված էր պատվիրակված օրենսդրության գաղափարը.

«Կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Ազգային ժողովը կարող է լիազորել կառավարությանը ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործում են Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում և չեն կարող հակասել օրենքներին: Այդ որոշումներն ստորագրում է Հանրապետության նախագահը»:

Օրինակ՝ ՀՀ ազգային ժողովը 30.05.1997 թ. Ն-184-1 որոշմամբ ՀՀ կառավարությանը լիազորել է իր գործունեության օրենսդրական ապահովման նպատակով ընդունել օրենքի ուժ ունեցող որոշում մինչև 1997 թվականի դեկտեմբերի 31-ը գործողության ժամկետով՝

- ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի ու մաքսատուրքի միասնական հաստատագրված վճարների սահմանման վերաբերյալ,
- ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաստատագրված վճարների սահմանման վերաբերյալ:

2.6.2. Ենթաօրենսդրական և ռեզլամենտային նորմատիվ իրավական ակտերի անհամատեղելիությունը 2005թ. խմբ. ՀՀ Սահմանադրությամբ: 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությամբ «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» ձևակերպումը նույնպես էքսպլիցիտ չի գործածվել, սակայն այդ խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանվեց ենթաօրենսդրական ակտերին ներհատուկ այն պահանջը, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտերը կարող են ընդունվել «օրենքի հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով»³⁸: Այսպես՝ 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում սահմանվեց.

«Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով»:

Բացի այս, 2005 թ. խմբ. Սահմանադրության 85-րդ հոդվածում հստակեցվեց, որ ՀՀ կառավարությունն ընդունում է որոշումներ ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ ՀՀ նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով: Այս կարգավորումները վկայում են այն մասին, որ խոսքը դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի մասին է:

Դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի մասին դրույթ ամրագրելուց բացի, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվեցին նաև հարցեր, որոնք կարող են կարգավորվել բացառապես օրենքով: Այսպես, 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության **83.5-րդ հոդվածի համաձայն՝** բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ 1) ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը (...): Ծիշտ է, «միայն օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունների շրջանակն ամրագրելու ինստիտուտը մեր երկրում անցել է որոշակի փորձություն, քանի որ դեռևս 1995 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության առնվազն 45 հոդվածներով ամրագրված էին այն կոնկրետ հարաբերությունները, որոնք կարող էին կարգավորվել բացառապես օրենքով»³⁹, սակայն 2005թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի կարգավորման հիմքում ընդհանուր առմամբ դրված էր ֆրանսիական ռեզլամենտային ակտերի ինստիտուտի փիլիսոփայությունը, ինչը, ըստ էության, պետք է նշանակեր, որ գործադիր իշխանությունը հնարավորություն էր

³⁸ «Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվել էր, որ նորմատիվ իրավական ակտը (...) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ ՀՀ Սահմանադրությամբ, **օրենքով սահմանված դեպքերում** և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը: Այս օրենքում առաջին անգամ նշվեց, որ նորմատիվ իրավական ակտն ընդունվում է օրենքով սահմանված դեպքերում:

³⁹ Դանիելյան Գ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի մեկնաբանություններ // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. «Իրավունք», Երևան, 2010, էջ 814:

ստանում այդ ցանկից դուրս գտնվող հարցերով իրականացնելու առաջնային (առանց «օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի» պայմանի) կարգավորում (ռեգլամենտային ակտերի ընդունում), սակայն զարմանալին այն է, որ դրան զուգահեռ 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությունում ավելացվեց նաև դրույթ այն մասին, որ նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են օրենքի հիման վրա և ի կատարումն այդ օրենքների (2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված): Փաստորեն, մի կողմից 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի կարգավորման փիլիսոփայությունից բխում էր այն, որ գործադիր իշխանությունը 2005թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածով նախատեսված ցանկից դուրս գտնվող հարցերով պետք է հնարավորություն ունենար իրականացնել առաջնային (ռեգլամենտային) կարգավորում, մյուս կողմից 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով բացառվեց 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածով նախատեսված ցանկից դուրս գտնվող հարցերով առաջնային կարգավորում իրականացնելու հնարավորությունը, քանի որ 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջով բոլոր նորմատիվ իրավական ակտերը պետք է ընդունվեին օրենքի հիման վրա:

Իհարկե չի բացառվում մեկ այլ մեկնաբանություն. 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի հիմքում դրված էր ոչ թե ֆրանսիական ռեգլամենտային կարգավորման փիլիսոփայությունը, այլ հետևյալ գաղափարը: 2005թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածը գործադիր իշխանության մարմիններին ոչ թե հնարավորություն էր տալիս այդ ցանկից դուրս գտնվող հարցերով իրականացնել առաջնային կարգավորում (ընդունել ռեգլամենտային ակտեր), այլ այդ հոդվածը պարունակում էր 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածում նախատեսված ցանկում նշված հարցերով երկրորդային կարգավորում իրականացնելու իմպլիցիտ արգելք, այսինքն՝ արգելում էր գործադիր իշխանության մարմիններին այդ ցանկում նախատեսված հարցերով ընդունել դասական իմաստով ենթաօրենսդրական ակտեր: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը պարտավոր էր 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածում նախատեսված հարցերը կարգավորել ամբողջ ծավալով:

Բոլոր դեպքերում նման մեկնաբանությունը կենսունակ չէ, քանի որ գործնականում հնարավոր չեղավ ապահովել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը բացառապես օրենքով սահմանելու 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության **83.5-րդ հոդվածի** պահանջը: 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությունում 83.5-րդ հոդվածը լրացնելուց հետո «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում 26.12.2006 թ. կատարվեցին փոփոխություններ և այն լրացվել հետևյալ դրույթով.

«Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքների կամ պարտականությունների իրականացումը կանոնակարգող կանոններ, կարգեր կամ տեխնիկական նորմեր (քաղաքաշինական, սանիտա-

րական, հակահրդեհային, հաշվապահական հաշվառման, ստանդարտացման և այլն) օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում և սահմաններում կարող են նախատեսվել իրավական այլ ակտերով, որոնք չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ»:

Այդ ժամանակ ինչքան էլ փորձ էր արվում հիմնավորել, որ օրենքի այս դրույթը չի հակասում 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությունում 83.5-րդ հոդվածին⁴⁰, մինևույն է, փաստն այն է, որ դրանով հնարավորություն տրվեց գործադիր իշխանության մարմիններին օրենքով նախատեսված դեպքերում սահմանել մարդու իրավունքների կամ պարտականությունների իրականացումը կանոնակարգող երկրորդային կանոններ, այսինքն՝ 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությունում 83.5-րդ հոդվածով բացառապես օրենսդրին վերապահված հարցով իրականացնել երկրորդային կարգավորում:

2.6.3. Ենթաօրենսդրական ակտերը 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությամբ: 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությամբ առաջին անգամ էքսպլիցիտ օգտագործվեց «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը:

2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության կարգավորումների տեսանկյունից ծագում է այն հարցը, թե ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում (անկախ տերմինների գործածությունից) նախատեսված է դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի⁴¹, թե՞ պատվիրակված օրենսդրության ինստիտուտը: Բանն այն է, որ այս հոդվածում մի կողմից նշվում է, որ ենթաօրենսդրական ակտերը պետք է հիմնված լինեն օրենքի վրա և ապահովեն դրա իրականացումը (դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերին հատուկ պահանջ), մյուս կողմից՝ լիազորող նորմերի իրավական որոշակիության մասին (օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակմանը հատուկ պահանջ): Եթե ենթաօրենսդրական ակտերը հիմնված են օրենքի վրա և կոչված են ապահովելու դրա իրականացումը, ապա դա նշանակում է, որ օրենսդիրը կարգավորել է տվյալ հարաբերությունների էական կողմերը, իսկ դրանց իրականացումն ապահովող հարցերի կարգավորումը (մանրամասների սահմանումը) թողել է գործադիր իշխանությանը: Այս պարագայում անհասկանալի է, թե ինչ նպատակով է սահմանվել ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորող նորմի որոշակիությունը մասին պահանջ: Կրկին նշենք, որ լիազորող նորմերի իրավական որոշակիության (գերմանական իրավունքի բառապաշարով՝ լիազորությունների բովանդակությունը, նպատակը և ծավալը) պահանջը տրամաբանություն ունի այն դեպքերում, երբ

⁴⁰ Դանիելյան Գ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի մեկնաբանություններ// Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, «Իրավունք», Երևան, 2010, էջ 815:

օրենսդիրը իր իրավասության մեջ մտնող հարցի կարգավորումն ուղղակի պատվիրակում է գործադիր իշխանության մարմիններին: Քանի որ նման դեպքերում օրենսդիրը իր իրավասության մեջ գտնվող հարաբերությունը որևէ կերպ չի կարգավորում, ուստի պետք է հստակ սահմանի գործադիր իշխանության մարմիններին փոխանցվող օրինաստեղծ լիազորության ծավալը և բովանդակությունը:

Այս տեսական վերլուծությունից հետո պետք է կրկին անդրադառնալ հայկական իրականությունում գիտական բանավեճերի տեղիք տված գլխավոր հարցին. 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից ենթաօրենսդրական ակտ կարող են ընդունել Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնց նման լիազորություն վերապահվել է Սահմանադրությամբ թե՛ նաև օրենքով:

3. Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող մարմիններին որոշելը. մեկնաբանման սուբյեկտիվ և օբյեկտիվ համակարգերը

3.1. Ընդհանուր դրույթներ

3.1.1. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի հեղինակային շարադրանքը: 2015 թ. խմբ. Սահմանադրության նախագծման գործընթացում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի ներկայիս խմբագրությունն առաջարկել է սահմանադրագետ Վ. Պողոսյանը: Այսպես՝ ՀՀ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի 49-րդ նիստի 03.07.2015 թ. արձանագրությունում նշվում է.

«Սահմանադրության նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ Վ. Պողոսյանն առաջարկեց հոդվածի ձևակերպումից հանել «այլ» բառը՝ հոդվածն ամրագրելով հետևյալ շեշտադրությամբ. «Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն սպասողներու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին»: Առաջարկն ընդունվեց»:

Ինչպես նշվեց, սահմանադրագետ Վ. Պողոսյանը, որը 2015 թ. սահմանադրական բարեփոխումների ակտիվ դերակատարներից է, դեռևս 2005 թ.-ին այլ մասնագետների հետ միասին հանրությանը ներկայացրել էր Սահմանադրության փոփոխությունների հեղինակային նախագիծ, որի 7-րդ հոդվածի 5-րդ մասը վերաբերում էր քննարկվող հարցին, որտեղ նրանց հաջողվել էր իրենց դիրքորոշմանը տալ օբյեկտիվ տեսք:

Նշված բաժնում, ըստ էության, քննարկվելու է այն հարցը, թե 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասն արդյոք պետք է պարզաբանել

մեկնաբանման սուբյեկտիվ համակարգի՝ հիման վրա, թե՛ այդ տեքստը պետք է ընթերցել մեկնաբանման օբյեկտիվ տեսության հիման վրա:

3.1.2. Մեկնաբանման սուբյեկտիվ և օբյեկտիվ համակարգերի ընդհանուր բնութագիրը: Իրավունքի մեկնաբանման տեսության մեջ առանձնացնում են օբյեկտիվ և սուբյեկտիվ համակարգեր, որոնք տարբեր իրավական ընտանիքներում կարող են ունենալ տարբեր անվանումներ: Օրինակ՝ Ամերիկյան սահմանադրական իրավունքում բանավեճերն ընթանում են Սահմանադրության մեկնաբանման օրիգինալիզմի (originalism) և ոչ օրիգինալիզմի (nonoriginalism) տեսության կողմնակիցների միջև: Օրիգինալիստները ԱՄՆ Սահմանադրությունը մեկնաբանում են այն իմաստով և նշանակությամբ, որոնք նկատի են ունեցել «ԱՄՆ հիմնադիր հայրերը», իսկ ոչ օրիգինալիստները կարծում են, որ ցանկացած մեկնաբանության խնդիրը օրենքի օբյեկտիվ նպատակը բացահայտելն է՝ անկախ նրանից, թե ինչ են ուզել ասել կամ ինչ են մտածել «հիմնադիր հայրերը»⁴¹:

Ա. Բարակն առանձնացնում է մեկնաբանման սուբյեկտիվ, օբյեկտիվ և սուբյեկտիվ-օբյեկտիվ համակարգերը: Մեկնաբանման սուբյեկտիվ համակարգերի դեպքում իրավական տեքստին իմաստ է տալիս դրա հեղինակի պատմահոգեբանական մտադրությունը (սուբյեկտիվ նպատակը): Մեկնաբանության նպատակն է տեքստին տալ այն իմաստը, որով կիրականացվի դրա հեղինակի գաղափարը: Ըստ մեկնաբանման այս համակարգի՝ մեկնաբանողը պետք է հետևի նույն ուղուն, ինչ տեքստի հեղինակը, միայն՝ հակառակ ուղղությամբ. տեքստի հեղինակը սկսում է մտադրությամբ և ավարտում տեքստի լեզվական ձևակերպումներով, իսկ մեկնաբանողը սկսում է տեքստի լեզվական ձևակերպումներից և ավարտում մտադրությամբ: Նորմի հեղինակը և մեկնաբանողը շարժվում են նույն ճանապարհով, բայց հակառակ ուղղություններով: Մեկնաբանման սուբյեկտիվ համակարգերը ձգտում են իրավական տեքստին տալ նույն իմաստը, որն ուներ այն կազմելու պահին (ex tunc): Մեկնաբանելիս հաշվի չի առնվում գոյություն ունեցող իրականությունը: Ժամանակի անցումը չի կարող փոխել հեղինակի մտադրությունը:

Մեկնաբանման համակարգերի երկրորդ տեսակը մեկնաբանման օբյեկտիվ համակարգերն են: Դրանք օբյեկտիվ են այն իմաստով, որ դրանց միջոցով փորձ է արվում հասկանալ տեքստի իմաստը՝ առանց տեքստի հեղինակի հղում կատարելու: Մեկնաբանման այս համակարգերի կողմնակիցները կարծում են, որ տեքստը գրելուց հետո հեղինակը կատարում է իր առաջադրանքը, և դրանից հետո նրա մտադրությունը մեկնաբանողին օգնություն ցույց տալու գործառնություն չի:

⁴¹ Lawrence B. Solum Originalism Versus Living Constitutionalism: The Conceptual Structure of the Great Debate, Northwestern University Law Review, Vol. 113, Issue 6, 2019, Берлявский Л. Г. Оригиналлистская и ноноригиналистская концепции конституционной интерпретации в США, Журнал российского права, №8 (200), 2013.

չի իրականացնում: Տեքստը գրելուց հետո այն կանգնած է իր ոտքերի վրա, և դրա մեկնաբանությունը չի ենթադրում պարզել հեղինակի մտադրությունները: Հեղինակի մտադրությունը իրավական տեքստի մաս չէ և չունի մեկնաբանման կարգավիճակ: Դատավորը կարող է տեքստը հասկանալ այլ կերպ, քան դրա հեղինակը: Հավանական է, որ դատավորը նույնիսկ ավելի լավ կհասկանա տեքստը, քան դրա հեղինակը: Դատավորը չի կրկնում տեքստի հեղինակի քայլերը: Ըստ մեկնաբանության օբյեկտիվ համակարգերի կողմնակիցների՝ մեկ անգամ գրված տեքստն ընտրում է իր ճանապարհը, ինչպես որ հրացանից արձակված փամփուշտը, աղեղից արձակված նետն է շարունակում իր թռիչքը, կամ նավը, որը բարձրացնում է խարիսխը, թողնում նավահանգիստը և նավարկում դեպի փոթորկոտ ծով⁴²: Օբյեկտիվ մեկնաբանման համակարգերը շատ են, սակայն ամենից տարածվածը տեքստուալիզմն է: Նոր տեքստուալիզմը ձգտում է հասկանալ տեքստը այնպես, ինչպես խելամիտ ընթերցողը կհասկանար այն գրելու պահին⁴³:

Մեկնաբանման օբյեկտիվ համակարգի կողմնակիցներից Ե.Վ. Վասկովսկին, հղում կատարելով գերմանական գրականությանը ժամանակին նշել է.

«Վաղուց ընդունված է, որ, այսպես կոչված, օրենսդիրը ֆիկտիվ անձ է, որին չի կարելի բռնել և պարզել (...): Ուստի մեկնաբանման միակ խնդիրը օրենքի օբյեկտիվ իմաստը բացահայտելն է, այսինքն՝ ուսումնասիրել այն, թե օրենքի միջոցով ինչ (ինչ կամք.- հեղ.) կարող է արտահայտել ոչ թե այս կամ այն որոշակի անձը, այլ ընդհանրապես՝ in abstracto քանակյան մարդը՝ որպես օրենքի ենթադրյալ հեղինակ»⁴⁴:

Ինչպես նշվեց, Վ. Պոդոյանը 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստի շարադրանքի հեղինակն է: Հարց է ծագում՝ ՀՀ դատավորները 2015թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում դրված Սահմանադրի ենթադրյալ կամքն արդյոք կարո՞ղ են կամ պարտավո՞ր են հասկանալ (իրավունքի մեկնաբանման սուբյեկտիվ համակարգի միջոցով) այնպես, ինչպես Վ. Պոդոյանը այն ներկայացրել է «Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ: Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2016, աշխատությունում (այսուհետ՝ «Համառոտ պարզաբանումներ»): Պատասխանը բացասական է, քանի որ քննարկվող իրավիճակում նորմերի մեկնաբանման սուբյեկտիվ համակարգի ո՛չ տեքստուալիզմի, ո՛չ էլ ինտենցիոնալիզմի տեսությունները կիրառելի չեն:

Նախ՝ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեքս-

⁴² Aharon Barak Purposive Interpretation in La”, Princeton University Press, 2005, p. 32, 33, 35.

⁴³ Aharon Barak Purposive Interpretation in La”, Princeton University Press, 2005, p. 305.

⁴⁴ Васильковский Е. В. Цивилистическая методология. Ч. 1: Учение о толковании и применении гражданских законов, Одесса, 1901, с. 94-95.:

տում օբյեկտիվորեն չի արտացոլվել սահմանադրագետի սուբյեկտիվ ինտենցիան (տեքստում «Սահմանադրությամբ լիազորված մարմին» ձևակերպման փոխարեն գործածվել է «Սահմանադրությամբ նախատեսված մարմին» ձևակերպումը):

Երկրորդ՝ 2016 թ. հրատարակված «Համառոտ պարզաբանումները», որտեղ արտացոլված է սահմանադրագետի դիրքորոշումը, չի կարող համարվել Սահմանադրի կամքը բացահայտելու երկրորդային աղբյուր (travaux préparatoires):

Որպեսզի հիմնավորենք, որ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստում չի արտացոլվել միայն ՀՀ Սահմանադրությամբ **լիազորված** մարմինների կողմից ենթաօրենսդրական ակտեր ընդունելու ինտենցիան, անհրաժեշտ է վերլուծել 2005 թ.-ին նրա մասնակցությամբ կազմված և հրատարակված Սահմանադրության փոփոխությունների հեղինակային նախագծի տեքստը:

3.2. Սահմանադրագետի ինտենցիան՝ ըստ 2005 թ. Սահմանադրության փոփոխությունների հեղինակային նախագծի

3.2.1. 2005 թ. Հեղինակային նախագծի տեքստը: Ինչպես նշվեց, 2005 թ. սահմանադրագետ Վ. Պողոսյանի և այլ մասնագետների ներկայացրած Սահմանադրության փոփոխությունների հեղինակային նախագծի (այսուհետ՝ 2005 թ. Հեղինակային նախագիծ) 7-րդ հոդվածի (Իրավական նորմերի հիերարխիան և օրինականության սկզբունքը) 5-րդ մասում սահմանված էր.

«Սահմանադրությամբ լիազորված մարմինները (ընդգծումը՝ հեղ.) Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն սպասողներու նպատակով կարող են ընդունել նորմատիվ իրավական ակտեր: Օրենքը պետք է կանխորոշի տվյալ նորմատիվ իրավական ակտի իմաստը և բովանդակությունը: Հանսպատասխան նորմատիվ իրավական ակտի մեջ պետք է նշվի դրա իրավական հիմքը»⁴⁵:

Բացի այդ, 2005 թ. Հեղինակային նախագծի հիմնավորումներում նրանք նշել են.

«Նախագիծը սահմանում է բոլոր այն մարմինները, որոնք իրավասու են ընդունել ենթաօրենսդրական ակտեր: Ըստ նախագծի՝ բոլոր ենթաօրենսդրական ակտերը պետք է ընդունվեն Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացման նպատակով, իսկ օրենքը պետք է կանխորոշի տվյալ նորմատիվ իրավական ակտի իմաստը և բովանդակությունը: Պետական և տե-

⁴⁵ Պողոսյան Վ., Թովմայան Հ., Գրիգորյան Վ. Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նախագիծ, «Ժողովրդավարություն» հաս. Կազմակերպություն, 2005, էջ 9:

ղական ինքնակառավարման մարմինների լիազորվածության հիմքը կարող են լինել միայն Սահմանադրությունը և օրենքները»⁴⁶:

Ըստ 2005 թ. Հեղինակային նախագծի՝ ենթաօրենսդրական ակտեր կարող էին ընդունել հետևյալ մարմինները՝ անկախ հանձնաժողովները, հանրապետության նախագահը, կառավարությունը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

Նորմատիվ իրավական ակտերը միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինների կողմից ընդունելու մտադրությունը 2005 թ. Հեղինակային նախագծում ստացել էր հստակ ձևակերպում: Նույնը չի կարելի ասել 2015 թ. սահմանադրական բարեփոխումների մասին:

3.2.2. 2005 թ. Հեղինակային նախագծի և 2015 թ. խմբ. Սահմանադրության տեքստերի համեմատական վերլուծությունը: 2005 թ. Հեղինակային նախագծի և 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության տեքստերի վերլուծությունից հստակ է, որ, ի տարբերություն 2005 թ. Հեղինակային նախագծի, 2015 թ. սահմանադրական փոփոխությունների ժամանակ հեղինակներին չի հաջողվել միայն Սահմանադրությամբ լիազորված մարմիններին ենթաօրենսդրական ակտ ընդունելու իրենց մոտեցմանը տալ օբյեկտիվ ձև. այդ մտադրությունը չի արտացոլվել 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության տեքստում: Ավելին՝ ՀՀ Սահմանադրության մեջ օգտագործվել են այնպիսի ձևակերպումներ, որոնք հեղինակների սուբյեկտիվ նպատակի և Սահմանադրության օբյեկտիվ տեքստի միջև ստեղծել են անջրպետ:

Այսպես՝ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության տեքստում «Սահմանադրությամբ լիազորված մարմիններ» ձևակերպումը փոխարինվեց «Սահմանադրությամբ նախատեսված մարմինները» ձևակերպմամբ: Հասկանալի է, որ մի բան է Սահմանադրությամբ լիազորված մարմինը, մեկ այլ բան է Սահմանադրությամբ նախատեսված մարմինը: Սահմանադրությամբ նախատեսված են մի շարք մարմիններ, որոնք Սահմանադրությամբ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված չեն:

Վերջին հաշվով հասկանալի չէ, թե ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորող նորմը սահմանվում է Սահմանադրությամբ, թե՛ կարող է սահմանվել նաև օրենքով: «Գերմանական մոդելի» մեկնաբանության կողմնակիցների իրական մտադրությունը հասկանալը էլ ավելի է բարդանում, քանի որ «Սահմանադրությամբ լիազորված մարմիններ» ձևակերպման փոխարեն 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության տեքստում հայտնվեց «օրենքով լիազորված» ձևակեր-

⁴⁶ Պողոսյան Վ., Թովմասյան Հ., Գրիգորյան Վ. Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նախագիծ, «Ժողովրդավարություն» հաս. կազմակերպություն, 2005, էջ 1:

պումը: «Գերմանական մոդելի» մեկնաբանության կողմնակիցները փաստացի գտնում են, որ միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինները (չնույնացել Սահմանադրությամբ նախատեսված մարմինների հետ) կարող են ընդունել ենթաօրենսդրական ակտ, սակայն, ի տարբերություն նրանց, 2005 թ. Հեղինակային նախագծի՝ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում «Սահմանադրությամբ լիազորված» հասկացության փոխարեն օգտագործել են «օրենքով լիազորված» ձևակերպումը: Դրա հետևանքով նրանց ենթադրյալ մտադրության և ՀՀ Սահմանադրության տեքստի միջև ծագել է խզվածություն:

2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության բոլոր այն հոդվածներում, որտեղ նշվում է այս կամ այն մարմնի կողմից ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին, ամրագրված են նյութափրավական լիազորող նորմեր: Օրինակ՝ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կառավարության անդամներն իրավասու են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Այս նորմը, անկասկած, իր բնույթով նյութափրավական լիազորող նորմ է: Ուստի ծագում է բնական հարց. 2015թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «օրենքով լիազորված» ձևակերպման համատեքստում կառավարության անդամների համար արդյոք օրենքով պե՞տք է կրկին ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին լիազորող նորմ սահմանել: Պատասխանը բացասական է, քանի որ կառավարության անդամների կողմից ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին **ընդհանուր** լիազորող նորմ ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 4-րդ մասում արդեն իսկ սահմանված է: Այլ բան է, որ օրենքով պետք է որոշել ենթաօրենսդրական ակտեր ընդունելու դեպքերը և կարգը, սակայն օրենքով նման դեպքեր սահմանելու վերաբերյալ կանոնները ոչ այնքան նյութափրավական լիազորող նորմեր են (թեև օրենքի տեքստերում դրանք հաճախ ձևակերպված են որպես լիազորող նորմեր), որքան ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված **ընդհանուր** լիազորող նյութափրավական նորմերի իրականացման համար անհրաժեշտ վարությային նորմեր: Ճիշտ է՝ ենթաօրենսդրական ակտ ընդունելու դեպքերը սահմանող որոշ նորմերից կարելի է անուղղակի բխեցնել ենթաօրենսդրական ակտ ընդունելու **կոնկրետ** լիազորող նորմ (դա հնարավոր է հատկապես այն դեպքերում, երբ օրենքով տվյալ մարմնի համար սահմանված չէ ենթաօրենսդրական ակտ ընդունելու **ընդհանուր** լիազորություն), սակայն դրանից հարցի էությունը չի փոխվում, քանի որ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու դեպքերը սահմանող նորմերի առաջնային խնդիրը ոչ թե տվյալ մարմնին ենթաօրենսդրական ակտ ընդունելու **ընդհանուր** լիազորություն վերապահելն է, այլ այն դեպքերը սահմանելն է, որոնց վերաբերյալ տվյալ մարմինը կարող է իրացնել ենթաօրենսդրական ակտ ընդունելու իր **ընդհանուր** լիազորությունը:

«Գերմանական մոդելի» մեկնաբանության կողմնակիցների մտադրության

բացահայտման հեռանկարը էլ ավելի է մշուշոտվում, երբ փորձում ես հասկանալ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում և այլ հոդվածներում օգտագործվող «օրենքով լիազորված», «օրենքի հիման վրա» և «օրենքով սահմանված դեպքերում» ձևակերպումների հարաբերակցությունը (սա առանձին քննարկման ենթակա հարց է):

Այսպիսով, ի տարբերություն 2005 թ. Հեղինակային նախագծի, 2015 թ. սահմանադրական բարեփոխումների ընթացքում չստեղծվեց այն օբյեկտիվ տեքստը, որը կհանդիսանար ենթաօրենսդրական ակտերը միայն Սահմանադրությամբ **լիազորված մարմինների** կողմից ընդունելու կարգավորման (մեկնաբանության) ելման կետը:

3.3. Գոկարինալ պարզաբանումները մեկնաբանման երկրորդային աղբյուր չեն

Այս դեպքում կարելի է առաջարկել 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը պարզաբանել ոչ թե մեկնաբանման օբյեկտիվ համակարգի, այլ մեկնաբանման սուբյեկտիվ տեսության հիման վրա, այսինքն՝ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստի հեղինակի մտադրության միջոցով բացահայտել Սահմանադրի սուբյեկտիվ կամքը (ենթադրյալ կամքը): Այդ ենթադրյալ կամքը բացահայտելու նպատակով պետք է ուսումնասիրել երկրորդային աղբյուրները (*travaux préparatoires*⁴⁷), այսինքն՝ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը կամ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հանրային (պաշտոնական) քննարկումների արձանագրությունները: Ի տարբերություն 2005 թ. Սահմանադրության փոփոխությունների հեղինակային նախագծի հիմնավորումների՝ 2014 թ. սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի պատրաստած հայեցակարգում ենթաօրենսդրական ակտերը միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինների կողմից ընդունելու մասին որևէ դատողություն չկա⁴⁸: ՀՀ ազգային ժողովում Սահմանադրության նախագծի հրապարակային լուսման ժամանակ ևս այս հարցը չի քննարկվել (մեզ նման փաստ հայտնի չէ):

Ուստի կարելի է եզրակացնել, որ չկա որևէ օբյեկտիվ-պաշտոնական փաստական տվյալ (երկրորդային աղբյուր), որը թույլ կտար բացահայտելու Սահմա-

⁴⁷ Travaux préparatoires կանոնի էությունն այն է, որ օրենսդրական գործընթացում, քննարկվող նախագծից բացի, ստեղծվում են նաև դրա վերաբերյալ եզրակացություններ, կարծիքներ, որոնք իրենց հերթին քննարկվում են հանձնաժողովներում, և վերջնական տարբերակը դրվում է քվեարկության: Արդյունքում ընդունված օրենքի իրական իմաստը լիարժեք կարող է արտացոլված լինել այս տեսակի փաստաթղթերում: Ի վերջո, հենց այս փաստաթղթերն են նաև ուսումնասիրում պատգամավորները մինչ քվեարկելը: Տե՛ս Չարիկյան Կ. Իրավական նորմերի մեկնաբանում. տեքստ vs. իրավունք // Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2020, № 1 (31), էջ 21:

⁴⁸ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014: <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf> (մուտք 20.03.2023)

նադրի այնպիսի ենթադրյալ կամքը, ըստ որի՝ 2015թ. խմբ. Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորությունը կարող է սահմանվել միայն Սահմանադրությամբ:

Ճիշտ է՝ Վ. Պողոսյանի համահեղինակած «Համառոտ պարզաբանումներում» առկա է նման դատողություն, սակայն դա Սահմանադրի ենթադրյալ կամքի բացահայտման միջոց չէ, քանի որ այն մեկնաբանման երկրորդային-պաշտոնական աղբյուր չէ: Բացի այդ, «Համառոտ պարզաբանումները» հրատարակվել է 2016 թ.-ին, երբ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասն ընդունվել և գործում էր, մինչդեռ մեկնաբանման սուբյեկտիվ համակարգերի դեպքում նկատի են առնվում այն պատմական փաստաթղթերը, որոնք ստեղծվել են մինչև մեկնաբանվող նորմի ընդունումը: Այս պայմաններում պետք է փաստել, որ «Համառոտ պարզաբանումներում» արտահայտած դատողությունը գիտնականի կարծիք է, իսկ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ մտնելուց հետո այլևս «ապրում է սեփական կյանքով», այն ինքնավար է տեքստը շարադրած գիտնականի սուբյեկտիվ մտադրությունից:

Այսպիսով, 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է երկու պահանջ:

Առաջին՝ ենթաօրենսդրական նորմատիվ ակտ կարող են ընդունել բացառապես Սահմանադրությամբ նախատեսված մարմինները⁴⁹,

Երկրորդ՝ եթե այդ մարմինները օրենքով (այդ թվում՝ Սահմանադրությամբ) լիազորված են ընդունելու նման ակտ (ընդգծումը՝ հեղ.): Ստացվում է, որ ոչ միայն Սահմանադիրը, այլ նաև օրենսդիրը կարող է Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին օրենքով լիազորել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ ակտ:

Այս եզրահանգման, ինչպես նաև այս հարցով բանավիճող իրավաբանների փաստարկների վերիֆիկացիայի նպատակով հաջորդիվ կներկայացվեն ՀՀ բարձր դատարանների մոտեցումները:

Գործնականում ևս ապացուցվում է այն թեզը, ըստ որի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին օրենքով կարելի է լիազորել ընդունելու են-

⁴⁹ Ընդ որում՝ ՀՀ սահմանադրական զարգացումներն ընթանում են այն ուղղությամբ, որ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն պետք է վերապահել ոչ թե միայն ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին, այլ ցանկացած պետական մարմնի: Այսպես՝ 04.04.2023թ. տեղի է ունեցել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի և հանձնաժողովի համատեղ նիստը, որի ընթացքում քննարկվել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումը վերանայելու հարցը, որով սահմանվում է, որ Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Խորհուրդը կողմ է քվեարկել «Սահմանադրությամբ նախատեսված մարմիններ» հասկացությունը «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ» հասկացությունով փոխարինելու հարցին:

https://www.moj.am/article/3567?fbclid=IwAR2o7qObanAtR-x2_M8SUC343Mzg82QaxiuOtcJTsuN8z86ZYL_RndFBAJw

թաօրենսդրական ակտեր: Ստորև կներկայացվեն դեպքեր, երբ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինները, որոնց՝ ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորությունը թեև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված չէ, սակայն նրանք օրենքով ուղղակի կամ անուղղակի լիազորված են ընդունելու նորմատիվ բնույթի ակտեր:

4. ՀՀ բարձր դատարանների դիրքորոշումները

4.1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին օրենքով ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն վերապահելու հարցը ՀՀ սահմանադրական դատարանում և ՀՀ վճռաբեկ դատարանում հատուկ քննարկման առարկա չի եղել, այսինքն՝ որևէ գործով չի բարձրացվել այն հարցը, թե օրենսդիրը 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից արդյոք իրավասո՞ւ է Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին լիազորելու ընդունել ենթաօրենսդրական ակտեր, թե՛ միայն Սահմանադիրն է որոշել, թե Սահմանադրությամբ նախատեսված որ մարմիններն են իրավասու ընդունել ենթաօրենսդրական ակտեր, իսկ օրենսդիրը պարզապես պետք է օրենքով սահմանի, թե այդ մարմինները որ դեպքերում կարող են ընդունել ենթաօրենսդրական ակտեր: Միևնույն ժամանակ, ՀՀ բարձր դատարանները հարակից հարցեր քննարկելիս, անդրադարձել են քննարկվող խնդրին:

4.2. ՀՀ վճռաբեկ դատարանը

4.2.1. ՀՀ վճռաբեկ դատարանի 29.11.2022 թ. որոշմամբ «գերմանական մոդելի» մեկնաբանության արտատպումը: ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատը թիվ ՎԴ/4680/05/19 գործով 29.11.2022 թ. որոշմամբ նշել է.

«Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կարող են ընդունել միայն ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինները (իրականում «գերմանական մոդելի» մեկնաբանության տեսանկյունից խոսքը ոչ թե ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված, այլ լիազորված մարմինների մասին է՝ Ա.Ղ.), այլ կերպ ասած՝ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասության հասցեատերերի ցանկը սպառիչ է. այդ մարմիններն են՝ Կառավարությունը (ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածի 3-րդ մաս), կառավարության անդամները (ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 4-րդ մաս), ինքնավար մարմինները (ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածի 3-րդ մաս), համայնքի ավագանին (ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 3-րդ մաս), Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ՀՀ Սահմանադրության 194-րդ հոդվածի 2-րդ մաս), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածի 5-րդ մաս), Կենտրոնական բանկը (ՀՀ Սահմա-

նադրության 200-րդ հոդվածի 5-րդ մաս) և Բարձրագույն դատական խորհուրդը (ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 3-րդ մաս): Ընդ որում, վերոհիշյալ մարմինները կարող են ենթաօրենսդրական ակտեր ընդունել միայն օրենքով հասակ նախատեսված դեպքերում, իսկ լիազորող նորմը պետք է համապատասխանի որոշակիության սկզբունքին, այսինքն՝ պետք է լինի բավականաչափ հստակ՝ օրենսդրի կամքի բովանդակությունն ու սահմանները հասկանալու համար»:

Այս գործով վեճի անմիջական առարկան չէր վերաբերում այն հարցին, թե օրենսդիրը, 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից, արդյոք իրավասո՞ւ է լիազորել Սահմանադրությամբ նախատեսված մարմինն ընդունելու ենթաօրենսդրական ակտ, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանն այդ հարցի վերաբերյալ հայտնել է 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը վերարտադրող դիրքորոշում:

Գիտական վեճերի տեղիք տվող հարցերի վերաբերյալ որևէ խումբ գիտնականների մոտեցումը Բարձր դատարանների կողմից ընդունելը ինքնին բնական է, քանի որ իրավաբանական դոկտրինի գոյության նպատակներից մեկը պրակտիկային օժանդակելն է: Ուստի ՀՀ վճռաբեկ դատարանն անկասկած կարող էր 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը պարզաբանելիս գիտակցաբար կիսել «գերմանական մոդելի» մեկնաբանությունը: Այնուամենայնիվ, մտահոգության տեղիք է տալիս երկու հանգամանք:

Նախ՝ դատական ակտի նախագիծը պատրաստող փորձագետների ստեղծագործական մտքի և բարեխղճության պակասության հետևանքով նրանք որոշման նախագծում ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասության հասցեատերերի սպառիչ ցանկի մասին որևէ լրացուցիչ հիմնավորում կամ պարզաբանում չեն ներկայացրել, դրա փոխարեն պարզապես արտատպել են (ընդ որում՝ առանց վկայակոչման) Վ. Պողոսյանի համահեղինակած՝ «Համառոտ պարզաբանումներում» առկա պնդումը:

Երկրորդ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նույն պալատը 29.11.2022 թ. քննարկվող որոշումը կայացնելուց մի քանի ամիս անց՝ 17.03.2023 թ., ընդունել է որոշում, որտեղ արտահայտել է սկզբունքորեն հակառակ դիրքորոշում՝ փաստացի հերքելով 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը:

4.2.2. ՀՀ վճռաբեկ դատարանի 17.03.2023 թ. որոշմամբ «գերմանական մոդելի» մեկնաբանության փաստացի հերքումը: ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/7463/05/21 գործով 17.03.2023 թ. որոշման մեջ հաստատել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, որն ընդգրկված չէ իր իսկ 29.11.2022 թ. որոշմամբ հաստատված՝ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու սահմանադրական

լիազորություններ ունեցող մարմինների սպառիչ ցանկում, կարող է ընդունել ենթաօրենսդրական ակտ: Չարմանալին այն է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը 17.03.2023թ. որոշման մեջ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ենթաօրենսդրական ակտ ընդունելու իրավասությունը ճանաչելիս վկայակոչել է 2015թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 17.03.2023թ. որոշման մեջ կարդում ենք.

*«ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...):
Նշված սահմանադրական նորմն ուրվագծում է Սահմանադրությամբ նախատեսված մարմինների իրավաստեղծ լիազորության սահմանադրական սահմանները, այն է՝*

- Սահմանադրությամբ նախատեսված մարմինների իրավաստեղծ գործունեությունն ինքնանպատակ չէ. այդ գործունեությունը պետք է ուղղված լինի սահմանադրի և օրենսդրի կամքի կենսագործմանը,
- ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ այդ մարմիններին օժտում է օրենսդիրը (...):»:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին համահունչ՝ օրենսդիրը իրավահարաբերության ծագման պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կառավարությանն առընթեր մարմինների ղեկավարներին, այդ թվում՝ Կոմիտեի նախագահին, օժտել է նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ (ընդգծումը՝ հեղ.), որպիսի լիազորության շրջանակը ուրվագծվում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով և իրավահարաբերության ծագման պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով ամրագրված հետևյալ սահմաններով (...):»:

Այս գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արել է խիստ վիճելի դատողություն. «Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի նորմը, որով ՀՀ կառավարությանն առընթեր մարմինների ղեկավարների, այդ թվում՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին վերապահվել էր նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն, համարել է 2015թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին համապատասխանող⁵⁰: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանը պետք է քննարկեր «Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի՝ ՀՀ կառավարությանն առընթեր մարմինների ղեկավարներին նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն վերապահող և այդ պահին գործող նորմը 2015թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող

⁵⁰ «Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի՝ ՀՀ կառավարությանն առընթեր մարմինների ղեկավարներին նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորություն վերապահող դրույթները չէր համապատասխանեցվել 2015թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

ճանաչելու հարցով ՀՀ սահմանադրական դատարանն ղիմելու նպատակահարմարությունը⁵¹:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերը նշված գնահատականը չի համապատասխանում 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ ինչպես «գերմանական մոդելի» մեկնաբանության (տե՛ս 1.2.2. կետը), այնպես էլ տեքստային-նպատակային մեկնաբանության կողմնակիցների (տե՛ս 1.2.3. կետը) տված պարզաբանումներին:

2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանության տեսանկյունից օրենսդիրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին չի կարող լիազորել ընդունելու ենթաօրենսդրական ակտ, քանի որ ընդգրկված չէ ՀՀ **Սահմանադրությամբ** ենթաօրենսդրական ակտ ընդունելու **լիազորություն** ունեցող մարմինների ցանկում:

2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստային-նպատակային մեկնաբանության տեսանկյունից օրենսդիրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին չի կարող լիազորել՝ ընդունելու ենթաօրենսդրական ակտ, քանի որ այն ՀՀ Սահմանադրությամբ **նախատեսված** մարմին չէ⁵²:

Հուսով ենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի ընկալման հարցում վերջնականապես կկողմնորոշվի և խնդրի վերաբերյալ գիտակցված որոշում կկայացնի, երբ կքննի կոնկրետ գործ, որի անմիջական առարկան կհանդիսանա օրենսդրի կողմից՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինն ենթաօրենսդրական ակտ ընդունել լիազորություն վերապահելու հարցը: Ընդ որում, այս հարցի վերաբերյալ վերջնական դիրքորոշում հայտնելու իրավասությունը ՀՀ սահմանադրական դատարանինն է:

4.3. ՀՀ սահմանադրական դատարանը

4.3.1. Ընդհանուր դիրքորոշումը: ՀՀ սահմանադրական դատարանը իրավաբան գիտնականների միջև առկա վեճի վերաբերյալ հստակ դիրքորոշում չի հայտնել: Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանը 23.12. 2021թ. ՍԳՈ-1621 որոշմամբ նշել է.

⁵¹ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն նորմատիվ ենթաօրենսդրական ակտերը, որոնք ընդունված մարմինները 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության կամ համապատասխան մարմիններին կամ պաշտոնատար անձանց ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորություն սահմանող օրենքների ուժի մեջ մտնելուց հետո այլևս իրավասու չեն ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, շարունակում են գործել, սակայն արգելվում է դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարել: Սույն մասով նախատեսված ակտերի գործողությունը կարող է դադարեցնել այդ ակտերով սահմանված հարաբերությունները կարգավորելու իրավասություն ունեցող մարմինը:

⁵² Տե՛ս Ղամբարյան Ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և սահմանադրական մարմինները, Հեղ. հրատ, Երևան, 2023:

«(...) Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով օրենսդիրն օժտված է Սահմանադրությամբ նախատեսված համապատասխան մարմիններին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելը լիազորելու հայեցողությամբ, որոնք իրենց բնույթով կկոնկրետացնեն օրենքով սահմանված պարտականությունների իրավական բովանդակությունը»:

Այս դիրքորոշման մեջ «համապատասխան» բառի առկայությունը կարող է ստեղծել այնպիսի տպավորություն, որ ՀՀ սահմանադրական դատարանը նկատի է ունեցել այն, որ ենթաօրենսդրական ակտեր կարող են ընդունել Սահմանադրությամբ նախատեսված ոչ թե բոլոր մարմինները, այլ միայն համապատասխան մարմինները, այսինքն՝ այն մարմինները, որոնք ՀՀ Սահմանադրությամբ լիազորված են ընդունելու ենթաօրենսդրական ակտեր: Հասկանալի է, որ նման ենթադրություն կարելի է անել միայն «գերմանական մոդելի» մեկնաբանությունը պաշտպանելու «շատ մեծ ցանկության» դեպքում, երբ այլ փաստարկներով հնարավոր չէ ապացուցել այս կամ այն մեկնաբանության իրավացիությունը: ՀՀ սահմանադրական դատարանը նշված գործով այս հարցը չի քննարկել, ուստի բացառապես մի բառի օգտագործման հիման վրա հնարավոր չէ բացահայտել ՀՀ սահմանադրական դատարանի նույնիսկ ենթադրյալ կամքը:

Երկրորդ՝ քննարկվող խնդրի վերաբերյալ առավել հստակ դիրքորոշում հայտնել է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմը, որի դիրքորոշումը թեև չի նույնանում ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման հետ, սակայն դրանից կարելի է հասկանալ 2015թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի ընկալման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի փորձագետների մոտեցումը:

4.3.2. ՀՀ սահմանադրական դատարանի՝ «Սահմանադրական դատարանի աշխատակարգը» նորմատիվ բնույթի որոշմամբ հաստատելը

(ա) Աշխատակարգի ընդունման ընթացակարգը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն.

«Սահմանադրական դատարանի աշխատակարգն ընդունվում, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Սահմանադրական դատարանի՝ դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված աշխատակարգային որոշմամբ: Սահմանադրական դատարանի աշխատակարգը հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով»: ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակարգն ընդունվել է 09.07.2018 թ. ՄԴԱՈ-1-Ն որոշմամբ՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով (այսուհետ՝ Աշխատակարգ):

Արդյո՞ք կարելի է Աշխատակարգը համարել ենթաօրենսդրական նորմատիվ

իրավական ակտ: Այս հարցին պետք է պատասխանել Աշխատակարգի բովանդակությունը և արտաքին (ձևական) հատկանիշները վերլուծելու միջոցով:

(բ) *Աշխատակարգի նորմատիվությունն ըստ բովանդակության:* Աշխատակարգի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ այս փաստաթղթում արտացոլված են առավելապես ՀՀ սահմանադրական դատարանում ներքին հարաբերությունները կարգավորող դրույթներ, սակայն դրան գուցահեռ քիչ չեն նաև այնպիսի դրույթներ, որոնք ունեն արտաքին ազդեցություն. հասցեագրված են դատավարության մասնակիցներին: Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր և բանավոր ընթացակարգերով գործերի դատաքննության կանոնները սահմանվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգով՝ հիմք ընդունելով օրենքի ընդհանուր պահանջները:

Այս նորմի հիման վրա Աշխատակարգում ամրագրվել են մի շարք դրույթներ, որոնք սահմանում են դատավարության մասնակիցների վարքագծի կանոններ: Նշենք մի քանիսը.

- 1) դատավարության մասնակիցները և հրավիրյալները դատարանին դիմում են «Բարձր դատարան», նիստը նախագահողին՝ «Մեծարգո նախագահող», Սահմանադրական դատարանի դատավորին՝ «Սահմանադրական դատարանի հարգարժան դատավոր» արտահայտություններով (Աշխատակարգի 44-րդ կետ),
- 2) դատավարության կողմերի կողմից բացատրություններ տալու հաջորդականությունը և տևողությունը կարող են սահմանվել Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ (Աշխատակարգի 51-րդ կետ),
- 3) մինչև ցուցմունքներ տալը վկան, նիստը նախագահողի կողմից՝ ակնհայտ կեղծ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին նախազգուշացվելուց հետո, նիստերի քարտուղարի միջոցով ստորագրում է հետևյալ բովանդակությամբ հայտարարության ներքո՝ (...) (Աշխատակարգի 56-րդ կետ),
- 4) ՀՀ սահմանադրական դատարանի նիստի ավարտին կողմերն իրավունք ունեն հանդես գալու եզրափակիչ ելույթով (Աշխատակարգի 59-րդ կետ),
- 5) եզրափակիչ ելույթով հանդես գալու ընթացքում կողմերն իրավունք չունեն վկայակոչելու դատաքննության ընթացքում չհետազոտված հանգամանքներ (Աշխատակարգի 61-րդ կետ):

Ակնհայտ է, որ սույն վարքագծի կանոններն արտաքին ներգործություն ունեցող դատավարական նորմեր են. դրանց հասցեատերերի մեծ մասը ոչ թե ՀՀ սահմանադրական դատարանի դատավորներն են կամ աշխատակազմը, այլ դատավարության մասնակիցները: Ընդ որում, եթե համեմատենք դատավարական իրավունքի այլ ճյուղերի հետ, ապա կնկատենք, որ համանման նորմեր ամրագրված են օրենսգրքի ձև ունեցող նորմատիվ իրավական ակտերում, օրինակ՝

ՀՀ քր. դատ. օր. ում: Այսպիսով, Աշխատակարգի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ այն պարունակում է մի շարք դատավարական-իրավական նորմեր: Այս պայմաններում պետք է փաստել, որ Աշխատակարգը բնույթով նորմատիվ իրավական ակտ է: Ընդ որում, Աշխատակարգը ընդունող մարմինն այն նույնպես համարել է նորմատիվ իրավական ակտ, ինչը պարզ է դառնում Աշխատակարգի արտաքին (ձևական) հատկանիշների վերլուծության պարագայում:

(գ) *Աշխատակարգի նորմատիվությունն ըստ արտաքին հատկանիշների*: Մինչ 19.04.2021թ. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի հերթական համարից անմիջապես հետո իրավական ակտում իրավական ակտն ընդունող մարմինը «Ն» (նորմատիվ) տառով նշում է կատարում դրա նորմատիվ բնույթի մասին⁵³: Ինչպես նշվեց, ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակարգն ընդունվել է 09.07.2018թ. ՄԳԱՌ-1-Ն որոշմամբ: Նշված որոշման համարում ամկա է «Ն» տառով նշում. արդյո՞ք դա նշանակում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը, իր ընդունած որոշման համարում «Ն» տառը նշելով, ցույց է տվել, որ այդ ակտն ունի նորմատիվ բնույթ: Եթե ակտն ընդունող մարմինն այն համարել է նորմատիվ բնույթի իրավական ակտ, ապա ընդհանուր կարգի համաձայն՝ Աշխատակարգի նախագիծը նույնպես պետք է «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով ենթարկվեր պետական-իրավական փորձաքննության⁵⁴:

Նշված հարցերի վերաբերյալ դիրքորոշումները պարզելու նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն և ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմ:

(դ) *ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշումը*: ՀՀ արդարադատության նախարարություն հարցում է ուղարկվել պարզելու, թե ՀՀ սահմանադրական դատարանի 09.07.2018թ. ՄԳԱՌ-1-Ն որոշմամբ ընդունված աշխատակարգի, այդ թվում վեջինիս՝ 2019 թվականի հուլիսի 24-ի ՄԳԱՌ-84, 2019 թվականի դեկտեմբերի 20-ի ՄԳԱՌ-168, 2020 թվականի փետրվարի 28-ի

⁵³ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում 19.04.2021թ. ՀՕ-175-Ն օրենքով կատարած լրացմամբ սահմանվեց, որ անհատական և լոկալ ակտերի հերթական համարներում այդ ակտերի բնույթի վերաբերյալ նշումներ կատարելու կարգը՝ համապատասխանաբար «Ա» և «Լ» տառային նշումների միջոցով:

⁵⁴ Առանձին քննարկման հարց է, թե ՀՀ սահմանադրական դատարանի որոշման նախագիծը ինչքանով է նպատակահարմար ենթարկել պետական-իրավական փորձաքննության: Բանն այն է, որ «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական-իրավական փորձաքննությունը իրականացվում է ՀՀ Սահմանադրությանը և սույն օրենքին նորմատիվ իրավական ակտի նախագծի համապատասխանությունը որոշելու նպատակով: ՀՀ սահմանադրական դատարանը համապատասխան ակտերի սահմանադրականությունը վերջնական որոշող մարմինն է, ուստի նրա կողմից ընդունման ենթակա Աշխատակարգի նախագծի սահմանադրականությունը չի կարող որոշվել գործադիր իշխանության մարմնի կողմից:

ՄԳԱՈ-47 որոշումներով հաստատված փոփոխությունների նախագծերը ենթարկվել են արդյո՞ք «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար պարտադիր իրականացվող փորձաքննության:

ՀՀ արդարադատության նախարարությունը, ի պատասխան հարցմանը, 16.01.2023 թ. N /10.1/1867-2023 գրությամբ նշել է.

«Սահմանադրական դատարանի աշխատակարգի ընդունման, դրանում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին աշխատակարգային որոշման ընդունման գործընթացի համար նախատեսված են այլ կարգավորումներ, որոնց մեջ ներառված չէ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պարտադիր փորձաքննության ենթակա լինելու պահանջը: Ավելին, աշխատակարգում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին աշխատակարգային որոշման նախագծի քննարկման համար սահմանված են սեղմ ժամկետներ, որոնց շրջանակներում պետք է նախագիծը շրջանառվի Սահմանադրական դատարանի բոլոր դատավորների միջև, այնուհետև՝ ներկայացված կարծիքները ամփոփելուց հետո, առաջարկությունը քննարկվի և դրա վերաբերյալ որոշում ընդունվի Սահմանադրական դատարանի նախագահի հրավիրած աշխատակարգային նիստում: Ուստի, վերոգրյալից բխում է, որ Սահմանադրական դատարանի աշխատակարգի նախագիծը, դրանում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին աշխատակարգային որոշման նախագիծը ենթակա չեն պետական-իրավական փորձաքննության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով»:

ՀՀ արդարադատության նախարարության այս գրությունում տրված չէ հարցի գլխավոր պատասխանը. Աշխատակարգը նորմատիվ իրավական ակտ է, թե՞ ոչ: Եթե այն համարվում է նորմատիվ իրավական ակտ, ապա ընդհանուր կարգավորման համաձայն՝ պետք է անցնի փորձաքննություն՝ անկախ դրա ընդունման կարգի առանձնահատկությունից:

(ե) ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի դիրքորոշումը: Հարցում է ուղարկվել նաև ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմ, որպեսզի պարզենք, թե ՀՀ սահմանադրական դատարանը 09.07.2018 թ. ՄԳԱՈ-1-Ն որոշմամբ ընդունված Աշխատակարգի հերթական համարում առկա «Ն» տառային նշումը կատարելով, արդյո՞ք այն որակել է որպես նորմատիվ բնույթի ակտ:

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի 01.02.2023 թ. թիվ Ա/0094-2023 գրությունում ուղիղ նշված է.

«Սահմանադրական դատարանի աշխատակարգն ընդունվել է սահմանադրական օրենքի հիման վրա, կոչված է կարգավորելու այդ օրենքով նախատես-

ված հարցերը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված ներքին ընթացակարգերը, ուստի Սահմանադրական դատարանի աշխատակարգի մասին ՄԳԱՈ-1-Ն աշխատակարգային որոշումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ է, քանի որ ընդունվել է օրենքի հիման վրա և դրա իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված մարմնի՝ Սահմանադրական դատարանի կողմից»:

Կրկին նշենք, որ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությամբ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված չէ, սակայն սահմանադրական այս մարմնի աշխատակազմը իրավացիորեն պաշտոնապես հաստատել է, որ ՀՀ սահմանադրական դատարանը օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

5. Եզրահանգումներ

2015թ. ՀՀ Սահմանադրության տեքստը նախապատրաստած առանձին սահմանադրագետներ թեև *post factum* դիրքորոշում են հայտնում, որ ՀՀ-ում ենթաօրենսդրական ակտեր կարող են ընդունել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված միայն այն մարմինները, որոնք լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ, սակայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի օբյեկտիվ տեքստում նրանց այս սուբյեկտիվ ինտենցիան արտացոլված չէ: Այդ սահմանադրագետների՝ սույն հարցի վերաբերյալ 2016թ. դոկտրինալ աղբյուրներում արտահայտած դիրքորոշումը չի կարող համարվել Սահմանադրի ենթադրյալ կամքի բացահայտման աղբյուր:

Միայն ՀՀ Սահմանադրությամբ լիազորված մարմինների կողմից ենթաօրենսդրական ակտեր ընդունելու մոտեցումը չունի ոչ միայն տեքստային, այլ նաև տեսանելի գաղափարական հիմնավորում:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն ամրագրված է այն մոտեցումը, ըստ որի՝ ենթաօրենսդրական ակտ կարող են ընդունել Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնց նման լիազորություն վերապահվել է օրենքով:

Փրականության ցանկ (список литературы, reference list)

1. Դամբարյան Ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և սահմանադրական մարմինները, Հեղ. հրատ, Երևան, 2023:
Ghambaryan A. The Bodies, provided by The Constitution of Republic of Armenia and The Constitutional Bodies, Auth. publ., Yerevan, 2023.
2. Քիտ. խմբ. Ա. Դամբարյան, Մ. Մուրադյան Պետության և իրավունքի տեսություն. 3-րդ հրատ., Երևան, 2018, էջեր 452-453:

- Sc. Editor A. Ghambaryan, M. Muradyan Theory of State and Law, 3rd publ., Yerevan, 2018, p. 452-453.
3. Դանիելյան Գ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի մեկնաբանություններ // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. «Իրավունք», Երևան, 2010, էջ 814:
Danielyan G. The Interpretation of article 83.5 of the Constitution of RA // The Interpretation of The Constitution of Republic of Armenia , gen.ed. G. Harutyunyan, A. Vagharshyan, “Law”, Yerevan, 2010 p. 814.
 4. Դանիելյան Գ. Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա (ուսումնական ձեռնարկ), «Տիգրան Մեծ» հրատ, ISBN 978-99941-0-788-9, Երևան, 2021, էջեր 33-34:
Danielyan G. Law – making and legal technique (study guide), “Tigran Mets” publishing house, ISBN 978-99941-0-788-9, Yerevan, 2021, p. 33-34.
 5. Հովհաննիսյան Գ. Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն», «Օմեգա պրինտ» ՍՊԸ, ISBN 978-9939-1-1108-7 Երևան, 2020, էջ 115:
 6. Hovhannisyanyan G. General jurisprudence and legal methodology, “Omega print” Ltd. ISBN 978-9939-1-1108-7, Yerevan, 2020, p. 115.
 7. Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, «Տիգրան Մեծ» հրատ., ISBN 978-99941-0-772-8, Երևան, 2016, էջեր 29-30:
Poghosyan V., Sargsyan N., “Constitution Of The Republic Of Armenia In The Version Of 2015, Brief Explanations”, “Tigran Mets” publishing house, ISBN 978-99941-0-772-8, Yerevan, 2016, p. 29-30.
 8. Պողոսյան Ա. Դիտարկումներ Ա. Ղամբարյանի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և սահմանադրական մարմինները, աշխատանքի վերաբերյալ // <https://www.academia.edu/s/6d6ba6a288?fbclid=IwAR1Ov42cJcxibDVoG-h4Mk31BTZapZLpvSgPJ-eV-UjVUyYhvAmYC9KkL9a0> (մուտք 20.03.2023).
Poghosyan A. Observations on A. Ghambaryan’s “Bodies, provided by the Constitution of Republic of Armenia and Constitutional Bodies work// <https://www.academia.edu/s/6d6ba6a288?fbclid=IwAR1Ov42cJcxibDVoG-h4Mk31BTZapZLpvSgPJ-eV-UjVUyYhvAmYC9KkL9a0> (access 20.03.2023).
 9. Պողոսյան Վ., Թովմասյան Հ., Գրիգորյան Վ. Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նախագիծ, «Ժողովրդավարություն» հաս. Կազմակերպություն, Երևան, 2005, էջ 9:
Poghosyan V., Tovmasyan H., Grigoryan V. The project of amendments to the Constitution of Republic of Armenia, “Democracy” social organization, Yerevan, 2005, p.9.

10. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014: <http://www.parliament.am/library/-sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf> (մուտք 20.03.2023)
The concept of constitutional amendments of Republic of Armenia, Yerevan, 2014. <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf> (access 20.03.2023)
11. Aharon Barak Purposive Interpretation in Law, Princeton University Press, 2005, p. 32, 33, 35.
12. Currie D.P. The Constitution of the Federal Republic of Germany, Chicago, 1995, p. 126–131,
13. Foster N. German law and Legal System. Mayfield, 1993. P. 47.
14. Lawrence B. Solum Originalism Versus Living Constitutionalism: The Conceptual Structure of the Great Debate, Northwestern University Law Review, Vol. 113, Issue 6, 2019,
15. Lindseth P. The Paradox of Parliamentary Supremacy: Delegation, Democracy and Dictatorship in Germany and France, Jale Law Journal, 2004, Vol. 13, P. 1393–1394.
16. Mahendra P. Singh German Administrative Law In Common Law Perspective, University of Delhi Delhi, India, 1985. P. 27.
17. Zivs S.L. Sources of Law, M, 1981, p 111.
18. Арефина С. И. Проблемы делегированного законодательства в зарубежных странах (обзор), Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература. Сер. 4, Государство и право: Реферативный журнал №3, 2002, С. 50.
Arefina S.I. The problem of delegated legislation in the foreign countries (review), Social and humanitarian sciences, Domestic and foreign literature. Seria 4, State and Law: referative journal №3, 2002, p. 50.
19. Берлявский Л. Г. Оригиналистская и ноноригиналистская концепции конституционной интерпретации в США, Журнал российского права, №8 (200), 2013.
Berlyavskiy L.G. Originalist and Nonoriginalist Concepts of Constitutional Interpretation in the United States, the journal of Russian law, №8 (200), 2013.
20. Берлявский Л. Г., Данихно С. Н. Классификация источников конституционного права: вопросы теории и практики, Юрлитинформ, М., 2019. С. 325.
Berlyavskiy L.G., Danikhno S.N. The classification of sources of constitutional law: the questions of theory and practice, Yurlitinform, M., 2019, P. 325.
21. Васильева Т. А. Акты делегированного законодательства как источник публичного права зарубежных стран, труды Института государства и права РАН, №1, 2011, С.175.

- Vasilyeva T.A. The Acts of Delegated legislation as source of public law of foreign countries, papers of the Institute of state and law, RASS, №1, 2011, p.175.
22. Васильковский Е. В. Цивилистическая методология. Ч. 1: Учение о толковании и применении гражданских законов, Одесса, 1901, с. 94-95.
Vaskovskiy E.V. Civilistiv methodology, part 1: The doctrine of the interpretation and application of civil laws, Odessa, 1901, p. 94-95.
23. Волкова С. Н. Регламентарные акты и их место в системе нормативных правовых актов, Сибирский юридический вестник, № 4., 2013. С. 11.
Volkova S.N. Regulatory acts and Their Place in System of Normative Legal Acts, Siberian juridical bulletin, № 4., 2013, p. 11.
24. Волкова С. Н. Сравнительный анализ системы нормативных актов в странах романо-германской правовой семьи и в странах «Общего права», Вестник Университета имени О. Е. Кутафина, №3 (19), 2016, С. 216.
Volkova S.N., Comparative analysis of the system of normative acts in the countries of Romano-Germanic legal family and in the countries of “common law”, Bulletin of the university named after O.E. Kutafin, №3 (19), 2016, p. 216.
25. Жалинский А., Рерихт А. Введение в немецкое право, М., 2001, р.55.
Jalinskiy A., Rericht A. Introduction to German Law, M., 2001, P. 55.
26. Зивс С. Л. Источники права. М.: 1981. С. 111:
Zivs S.L., “Sources of Law”, M., 1981, p.111.
27. Злобин А. В. Юридическая природа подзаконных нормативных актов в Российской Федерации, Вестник СГЮА., № 5 (88), 2012, стр. 36.
Zlobin A.V. By-law legal character in the Russian Federation, Bulletin of SSJA, № 5 (88), 2012, p. 36.
28. Лафитский В. Миры права в теории и практике сравнительного правоведения, в 2-х томах. Том I, 2021, С. 294.
Lafitskiy V. The Worlds of law in the theory and practice of comparative jurisprudence, in 2 v., v.1, 2021, p. 294.
29. Отв. ред. проф. Б.А. Страшун Конституционное (государственное право) зарубежных стран, в 4 т., тома 1–2, часть общая: учебник / 3-е изд., обновл. и дораб. М.: 2000. С.155.
Sc. Ed. Proff. B.A. Strashun, Constitutional (state law) of foreign countires, in 4 v., v. 1-2, general part, tutorial / 3rd publ., updated and modified, M., 2000, p. 155.
30. Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М. В. Баглая, д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина Конституционное право зарубежных стран: учебник, Норма, М., 2004. С. 24.
Under general ed. Corresponding member RAS, proff M.V. Baglay, d.j.s., proff. Yu.I. Leybo and d.j.s., proff. L.M. Entin, The Constitutional law of foreign countries: tutorial, Norma, M., 2004, p.24.

31. Рене Давид, Камилла Жоффре-Спинози Основные правовые системы современности, пер. с фр., Международные отношения, М., 1999, С. 84.
Rene David, Camilla Joffre-Spinozi, "The main legal systems of modern times", tr. from fr., International Relations, M., 1999, p.84.
32. Романьков А.И., Червонюк В.И. Делегированное законодательство и регламентарная власть: проблема утверждения конституционного партнерства во взаимоотношениях законодательной и исполнительной ветвей власти, Сборник научных трудов кафедры конституционного и муниципального права: сборник статей, М.: Моск. ун-т МВД России, 2012. С. 65.
Romankov A. I., Chervonyuk V.I. Delegated legislation and reglamentive power: the problem of assertion of constitutional partnership in the relationships of legislative and executive branches of power, Collection of scientific papers of the chair of constitutional and municipal law: bulletin of articles, M., Moscow Uni., MIA RF, 2012, p.65.
33. Саидов А.Х. Сравнительное правоведение (основные правовые системы современности): учебник, Под ред. В.А. Туманова, Юрист, М., 2003. С. 172.
Saidov A.Kh. Comparative jurisprudence (major legal systems of modern times): tutorial", under ed. Of V.A. Tumanov, Lawyer, M., 1997, p. 172.
34. Соколов А. Н. Правовое государство: от идеи до ее материализации, Калининград, 2002, С. 90-91
Sokolov A.N. Rule of law: from an idea to its materialization, Kaliningrad, 2002, p. 90-91.
35. Сост. Дубровин В.Н. Конституции зарубежных стран, Юрлитинформ, М., 2001. С. 151.
Cr. Dubrovin V.N. The Constitutions of foreign countries, Yurlitinform, M., 2001, p. 151.
36. Троицкий В.С., Делегированное законотворчество: теория и практика: теория и практика, автореф. дисс. ... канд. юрид. наук. М.: 2005. С.10-11.
Troitskiy V.S., Delegated legislation: theory and practice, autoref. Diss. ... cand. Jurid.sc. M., 2005, p. 10-11.
37. Чиркин В.Е. Конституционное право зарубежных стран, Юрист, М., 1997. С. 266-267:
Chirkin V.E. The Constitutional law of foreign countries, Lawyer, M., 1997, p. 266-267.
38. Отв. ред. Ю.А. Тихомиров Конституция, закон, подзаконный акт, М., 1994. С. 52.
Sc. Editor Yu.A. Tikhomirov The Constitution, law, sub-delegation act , M., 1994, p.52.

Artur Ghambaryan

*Member of the Editorial Board of the Scientific-Practical
Journal “Legality” of the RA Prosecutor's Office,
Doctor of Juridical Sciences, Professor,
Chairman of the Department of Theory of Law and Constitutional
Law of Russian-Armenian University,
Honored Lawyer of the Republic of Armenia*

IDENTIFICATION OF THE BODIES AUTHORIZED TO ADOPT SUB-DELEGATION ACTS IN THE REPUBLIC OF ARMENIA⁵⁵

Abstract

The article highlights one of the most controversial issues among Armenian jurists: which state bodies in the Republic of Armenia have the authority to adopt sub-delegation acts: those provided for by the Constitution of the Republic of Armenia, which were authorized by the Legislator to carry out this duty, or those provided for by the Constitution of the Republic of Armenia, which were authorized by the Constitution to exercise that power.

Independent constitutional scholars who prepared the text of the Constitution in 2015 of the Republic of Armenia express a post-factum position that only those bodies authorized by the Constitution of the Republic of Armenia can adopt sub-delegation acts in the Republic of Armenia. This approach is criticized in the article, and it is also justified that these constitutionalists, when it pertains to this topic in 2016, were indeed concerned the position expressed in doctrinal works cannot be considered to be an indicator of revealing the Constitution's presumed will (subjective system of interpretation of law).

The article interprets Part 2 of Article 6 of the Republic of Armenia's Constitution on this issue using historical-legal and comparative-legal methods.

The author concludes that in the Republic of Armenia, sub-delegation acts can be adopted only by bodies authorized by law and provided for in the Constitution of the Republic of Armenia.

Keywords: A body provided by the Constitution of the Republic of Armenia; normative legal act; sub-delegation act; an authorizing norm; delegated legislation and regulatory acts.

⁵⁵ The article was presented on 05.04.2023 and was reviewed on 09.06.2023.

Артур Гамбарян

*Член редакционной коллегии научно-практического
журнала «Законность» Прокуратуры РА,
доктор юридических наук, профессор,
Заведующий кафедрой теории права и конституционного права
Российско-Армянского университета,
заслуженный юрист Республики Армения*

**ИДЕНТИФИКАЦИЯ ОРГАНОВ, УПОЛНОМОЧЕННЫХ ПРИНИМАТЬ
ПОДЗАКОННЫЕ АКТЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ⁵⁶**

Абстракт

В статье обсуждается один из вопросов, породивший острые полемики среди армянских юристов. Какие государственные органы РА правомочны принимать подзаконные нормативно-правовые акты: органы, предусмотренные Конституцией РА, которые уполномочены на принятие подзаконных нормативно-правовых актов законодателем, или органы, предусмотренные Конституцией РА, которые уполномочены на принятие подзаконных нормативно-правовых актов учредительной властью?

Отдельные конституционалисты, подготовившие текст редакции Конституции РА 2015 г., *post factum* выражают ту позицию, согласно которой в РА подзаконные нормативно-правовые акты могут принять только те органы, которые уполномочены на то Конституцией РА. В статье данная позиция осуждается, а также обосновывается, что позиция указанных конституционалистов, выраженная по данному вопросу в доктринальных работах 2016 г., не может считаться источником выявления предполагаемой волей Учредительной власти (субъективная система толкования права).

В статье на основе историко-правового и сравнительно-правового метода представляется толкование части 2 статьи 6 Конституции РА по поводу данного вопроса.

Автор заключает, что в РА подзаконные нормативно-правовые акты могут принять только органы, предусмотренные Конституцией РА, если они уполномочены на принятие таких актов законом.

Ключевые слова: органы, предусмотренные Конституцией РА; нормативно-правовой акт; подзаконный акт; уполномочивающая норма; делегированное законодательство; регламентные акты.

⁵⁶ Статья была представлена 05.04.2023 и прошла рецензирование 09.06.2023.